

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՎ

مارزق

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

31րդ ՏԱՐԻ, 2012, ԹԻԻ 7 (361) - VOL. XXXI № 7 السنة الحادية الثلاثين - العدد السابع



100-ԱՄԵՆԱԿ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՈՒԹԵՆՆ



# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՔԱՌ-ԱՅԱՐԿ ՆՈՐ ԱԿՈՒՄԲԻՆ ԲԱՅՈՒՄԸ

**Հ**այ սկաուտությունն 100-ամեակի տոնակատարությունները յատուկ փայլք է նշանակություն ստացան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի նոր ակումբին բացման հանդիսությամբ:

Ծանօթ է, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. 1998-են ի վեր կը գործէր Երեւանի «Ալէք Մանուկեան» փողոցին վրայ գտնուող եւ 160 քառ. մէթր տարածութեամբ գետնայարկ գրասենեակի մը մէջ, որ գնուած ու վերանորոգուած էր Համաշխարհային Սկաուտական Շարժումի եւ Հ.Մ.Ը.Մ.ի գանազան շրջաններու աջակցութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը անցնող ամիսներուն յաջողած էր յիշեալ գրասենեակը փոխանակել աւելի յարմարաւէտ կառոյցի մը հետ, որ քառայարկ շէնք մըն էր, 340 քառ. մէթր տարածութեամբ եւ ակմբային լայն կարելիութիւններով, օժտուած՝ երկու մեծ դահլիճներով, գրասենեակային եւ սկաու-

տական աշխատանքներու անհրաժեշտ սենեակներով:

Քառայարկ այս ակումբին բացումը կատարուեցաւ հայ սկաուտութեան 100-ամեակին նուիրուած բանակումին բացման պաշտօնական հանդիսութենէն անմիջապէս ետք, Շաբաթ, 4 Օգոստոսի յետմիջօրէին:

Բացման պաշտօնական արարողութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան, Համաշխարհային Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղար Լիւք Փանիստ, սկաուտական եւրոասիական բաժանմունքի տնօրէն Եուրի Էմիլիան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութենէն ներկայացուցիչ մը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչական անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նահատակ անդամ եղբ. Վարդան Բախշեանի մայրը՝ քոյր Այտա Բախշեան եւ 100-ամեակի բանակումին մասնակից պատուիրակութիւններու ներկայացուցիչներ:

Հոգեւոր հօր աղօթքէն եւ օրհնութենէն ետք, ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Եղբօր բարի գալուստի խօսքին յաջորդեց ակումբին բացումը նշող կարմիր երիզին հատումը պաշտօնական հիւրերուն կողմէ: Ապա, հիւրերը շրջեցան ակումբին գետնայարկն ու երեք յարկերը եւ երրորդ յարկի դահլիճին մէջ ներկայ եղան իրենց ի պատիւ կազմակերպուած ընդունելութեան:


Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նոր ակումբը կը կը գտնուի Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կից: Ան պիտի դառնայ սկաուտներու հաւաքատեղի-ակումբ եւ պիտի գործէ իբրեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնական գրասենեակ:





# ԹԻՒՆԻՆԳ ՆԻՒՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزیک مجله ریاضية شهریه تصدیرها جمعية الهوسنتمن الریاضی



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՐԶՈՒԹԵԱՆ


3107 ՏԱՐԻ, 2012, ԹԻՒ 7 (361)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 Սեդա Պէշլեան (Լիբանան),  
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),  
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.  
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան  
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան  
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ  
 Յովհաննիսեան (Հայաստան)

ԿԱՐԶԱԿԱՆ ԿԱԶՄ  
 Պատրիկ Կիւլպէնկեան, Գրիգորիս  
 Պողարեան, Աբօ Մոսիկեան  
 (Լիբանան), Յարութ Մատենլեան  
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),  
 Զարեհ Տէրվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշօ Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաձեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ  
 Պուրծ Համուտ, Եինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

## ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ծշդուած է 48000 Լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$70,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Միջազգային Բանակում 3
- Խմբ. Ե. Համագումար 10
- Հարցազրոյց 15
- Անդրադարձ 21
- Անհետացող Դէմքեր 24
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 28
- Մեր Կորուստները 34



## ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 26
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40





# ԽՆՄԲԱԳՆԱԿՆԵՐ

## ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԻՔ

(ՀԱՅ ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԵՒ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ Զ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԻԹՈՎ)

**Մ**արդու մը կազմաւորման ամենէն կարեւոր շրջանը, անկասկած, պատանեկութիւնն է: Մանկութենէն նոր դուրս եկած պատանին, երիտասարդութեան տարիքը թեւակոխելէ առաջ, կ'անցընէ չորսէն հինգ տարուան շրջան մը, որ ճակատագրական կնիքով կը դրոշմէ անոր կեանքին ընթացքը:

Այդ շրջանին պատանին կը կազմաւորուի ֆիզիքապէս, հոգեպէս եւ բարոյապէս: Ի յայտ կու գան անոր հակումները, ձգտումները եւ նախասիրութիւնները: Ձեւ կ'առնեն անոր գաղափարները: Կը ճշդուի անոր իտեալը: Ճիշդ այս զգայուն հանգրուանին, հարկ է հոգ տանիլ պատանին դաստիարակութեան, հսկել անոր զբաղումներուն, ուղղել թերիւնները, կերտել անոր նկարագիրը, ուղիղ ծամբու դնել անոր քայլերը:

Պատանեկութիւնը պատրաստութեան շրջանն է, երիտասարդութիւնը՝ գործի, արդիւնաբերութեան: Լաւ արդիւնք ունենալու համար պէտք է լաւ պատրաստել:

Առհասարակ, միութիւններու մէջ պատանիներ առողջ կերպով կը զարգացընեն իրենց միտքը, մարմինը եւ հոգին: Կը թրծուին, կը դաստիարակուին՝ դառնալու համար իրենց կոչումին եւ պարտականութիւններուն լրիւ գիտակցութիւնը ունեցող քաղաքացիներ, կարող զանազան պատասխանատուութիւններ ստանձնելու եւ ղեկավար դիրքեր գրաւելու:

Մեր պարագան կը տարբերի սովորական միութիւններէն, որովհետեւ բազմատեսակ են մեր մտահոգութիւնները, մանաւանդ Սփիւռքի մէջ, ուր մեր *առաջնահերթ նպատակը* պատանին հայ պահելն է, իր արմատներուն եւ հայրենիքին կապելն է:

Անշուշտ, անփոխարինելի դեր ունին

մեր վարժարանները: Սակայն, ժողովուրդին ծառայելու համար բաւարար չեն վարժարաններու մէջ ջամբուած ուսումն ու զարգացումը: Անոնց կողքին անհրաժեշտ է ունենալ հանրային գիծ, հանրային գործերու նուիրուելու պատրաստակամութիւն:

Երբ այս մտահոգութիւնները հրատապ կերպով կը ներկայանան սեղանի վրայ, այն ատեն կը զգանք անհրաժեշտութիւնը սկաուտական շարքերու, որոնք հայկական վարժարաններու կողքին մէկական դպրոցներ են, ուր սկաուտներ կը պատրաստուին ծառայելու ազգին:

Սկաուտական շարքերու մէջ պատանիներ ամենէն առաջ կը ստանան քաղաքացիական կրթութիւն, դառնալով նուիրապետութեան մը մէկ օղակը: Սկաուտներ կը վարժուին հաւաքական կեանքի, կ'ենթարկուին կարգապահութեան, կը սորվին հրահանգներ գործադրել, որպէսզի ապագային իրենց կարգին գիտնան հրամայել: Հոն կը զարգացնեն համագործակցութեան, ընկերասիրութեան եւ զոհողութեան ոգին, դառնալով սպասարկուները նոյն իտեալին:

Այս բոլորին կողքին, սկաուտներ կը զինուին հայեցի առողջ դաստիարակութեամբ՝ առաւելագոյն չափով կարենալ ծառայելու համար իրենց պատկանած ժողովուրդին: Կը սորվին ճանչնալ ու սիրել հայկական արժէքները, կը սորվին գուրգուրալ հայ լեզուին ու մշակոյթին:

Չի բաւեր միայն նուիրեալ մը ըլլալ: Այդ նուիրումը արժեւորելու եւ գործնական արդիւնքի վերածելու համար, հարկ է անհրաժեշտ պատրաստութիւնը ունենալ: Ահա ա՛յդ պատրաստութիւնն է որ կու տան սկաուտական շարքերը, որոնց *ազգային կարիքը* շատ ունինք մենք, այսօր եւ վա՛ղը:



# «ՆՈՐ ՀԱՐԻՐԱՄԵԱԿ, ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ԵՒ ՆՈՐ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐ»

ՀԱՅ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ  
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ



## Թղթակից ԵՐԵՒԱՆ

**Շ**աբաթ, 4 Օգոստոսի յետմիջօրէի ժամը 3-ին, Երեւանի «Հիւսիսային» պողոտայէն մինչեւ «Ազատութեան» հրապարակ կատարուած հանդիսաւոր տողանցքով բացոււմը կատարուեցաւ հայ սկաուտութեան 100-ամեակին նուիրուած յրեշնական բանակումին, որուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ-ի հինգ շրջաններէն (Լիբանան, Սուրիա, Հարաւային Ամերիկա, Փարիզ եւ Ալմերո), Իրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութենէն, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.էն եւ Ռուսիոյ, Պիելոուսիոյ, Ուքրանիոյ, Վրաստանի, Մոլտաւիոյ, Ղազախստանի, Չեխիոյ եւ Հոնկ Գոնկի ազգային սկաուտական կազմակերպութիւններէն 230 սկաուտներ:

Բացման տողանցքին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հ.Բ.Ը.Մ-ի Հայաստանի սկաուտներ: Տողանցքին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական



Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ներկայացուցիչ Նաթան Եպս. Յովհաննիսեան, Համաշխարհային Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղար Լիւբ Փանիստ, սկաուտական եւրոասիական բաժանմունքի տնօրէն Եուրի Էմիլիան, պետական ու քաղաքային վարչութիւններու ներկայացուցիչներ եւ բազմաթիւ հիւրեր:

Հայաստանի քայլերգին կատարումէն ետք, հիւրերն ու տողանցողները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Ապա, հայ սկաուտութեան դերն ու առաքելութիւնը գնահատող խօսք արտասանեց Նաթան Եպս. Յովհաննիսեան:

Այնուհետեւ, խօսք առաւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղար Լիւբ Փանիստ եւ յայտնեց, որ մեծ պատիւ է ներկայ գտնուիլ հայ սկաուտութեան 100-ամեակին նուիրուած յոբելեանական բանակումին, որուն կարգախօսն է՝ «Նոր հարիւրամեակ, նոր սերունդ եւ նոր կարելիութիւններ»:

Փանիստ հայ ըսկաուտներուն փոխանցեց աշխարհի 161 երկիրներէն աւելի քան 30 միլիոն ըսկաուտներու ողջոյնները եւ նշեց, որ աւելի



լի քան 30 միլիոն մարդիկ միացած են սկաուտութեան երդումին՝ հակառակ անոր որ կ'ապրին տարբեր երկիրներու մէջ, ունին տարբեր պատմութիւններ եւ աւանդութիւններ, կը դաւանին տարբեր կրօններ:

«Ես ասիկա կ'անուանեմ սկաուտութեան հրաշքը: Երբեք մի՛ մոռնաք, որ դուք ոչ միայն սկաուտ էք ձեր երկիրներուն մէջ, այլեւ դուք համաշխարհային ընտանիքի անդամներ էք: Սկաուտութեան հրաշք է նաեւ հայկական սկաուտութեան դրսեւորումը՝ իր ճկունութեամբ եւ տարբեր միջավայրերու մէջ զարգանալու ունակութեամբ, որովհետեւ հայկական սկաուտութիւնը գոյութիւն ունեցաւ ոչ միայն անկախ Հայաստանի մէջ, այլեւ ան գոյատեւեց հայկական Սփիւռքի մէջ, կազմակերպուածութեան տարբեր պայմաններու մէջ», ըսաւ Լիւբ Փանիստ:

Ան նաեւ աւելցուց, որ սկաուտութիւնը շարժում մըն է, որ հարուստ է փորձառութեամբ եւ նուաճումներով: Ան պատրաստած է եւ պիտի շարունակէ պատրաստել առաջնորդներ՝ հասարակութեան բոլոր մակարդակներուն համար:

«Մենք կ'արժարժենք, կը քննարկենք համաշխարհային խնդիրներ, բայց ատիկա կ'ընենք համայնքներու մակարդակով: Երիտասարդութիւնը երկրի ա-

պագան է, եւ երիտասարդներուն ուղղուած ներդրումները ուղղուած են ոչ միայն Հայաստանի, այլեւ՝ աշխարհի զարգացման: Ես համոզուած եմ, որ կենսունակ երիտասարդութեան զարգացման եւ արագ փոխուող մեր աշխարհին մէջ անոր այժմէականութեան պահպանման միջոցով, սկաուտութիւնը վստահօրէն կը մասնակցի ամուր, տեղական, ազգային եւ միջազգային համայնքներու կայացման եւ զարգացման յաջող հարիւրամեակին եւ անոր յաջորդող հարիւրամեակներուն ընթացքին», նշեց Համաշխարհային Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղարը:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան խօսք առնելով յայտնեց, թէ իսկապէս հաճոյք է հայ սկաուտութեան 100-ամեակին առիթով գտնուիլ Հայաստանի հողին վրայ եւ Հ.Մ.Ը.Մ-ի սեփական բանակավայրին մէջ կատարել 100-ամեակի բանակում:

«Կը շնորհաւորեմ հայ սկաուտութեան 100-ամեակը եւ յոյս ունիմ, որ նորանոր հարիւրամեակներ կը յաջողինք նուաճել իբրեւ միութիւն եւ իբրեւ ժողովուրդ», ըսաւ եղբ. Մկրտիչեան:

Այս միջոցին, բանակումի մասնակից պատուիրակութիւններու անդամները, իւրաքանչիւրը իր լեզուով, շնորհաւորեց

հայ սկաուտութեան 100-ամեակը եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին:

Խօսքերու աւարտին, ընթերցուեցաւ Հայաստանի մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու փոխ նախարար Արման Քարամեանի ուղերձը բանակումի մասնակիցներուն:

Տողանցքը վերջ գտաւ յետմիջօրէի ժամը 4-ին, որմէ ետք պաշտօնական հիւրերը ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի քառայարկ նոր կուռմբի բացման (տեսնել առանձին), իսկ սկաուտները ուղղուեցան Բիւրականի բանակավայր եւ սկսան եօթնօրեայ իրենց բանակումի յայտագիրներուն:

Աւելի ուշ, հիւրերը միացան բանակողներուն եւ ներկայ գտնուեցան նոյն օրը, երեկոյեան, գուարթ միջնորդութի մէջ

կազմակերպուած խորհրդակցանդէսին, որուն ընթացքին 15 երկիրներէ ժամանած սկաուտներ առաջին ծանօթութիւնները հաստատեցին իրարու հետ: Յաջորդող օրերուն, լեզուական եւ մշակութային տարբերութիւնները յաղթահարելով, բոլորը սերտ բարեկամութիւններ մշակեցին իրարու հետ, դառնալով հարազատ քոյրեր ու եղբայրներ:



**Եղբ. Յրայ Շնառհեան կ'իմաստասեր  
Հայաստանի մարտապետ  
Տիգրան Սարգսեանը:**



**ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ  
ԵՒ 100-ԱՄԵԱԿԻ ԾԱՌԱՏՆԿՈՒՄ**

100-ամեակի բանակումը ունեցաւ բաւական ճոխ ու բովանդակալից յայտագիր: Բանակողները այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Հայկական Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին: Անոնք մագլցեցան Արագածի գագաթը (4095 մ.) եւ օրական կազմակերպեցին խանդավառ ու յիշատակելի խարուկահանդէսներ՝ պատմական եւ մշակութային յայտագիրներով, ազգային երգով ու պարով:

Յատուկ յիշատակութեան արժանի է արհեստավարժ ձեւով լեռնագնացութեան կազմակերպումը, որուն մասնակցեցան բանակումին ներկայ բոլոր պատուիրակութիւնները՝

կազմելով իրարու մրցակից խումբեր, ըստ երկրի եւ թիւի:

Մեծ ոգեւորութեամբ տեղի ունեցաւ հայ սկաուտութեան 100-ամեակի ծառատնկումը: Համաշխարհային Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղար Լիւք Փանիստտ, Շարլ Ազնաւուրի «Արմենիա» երգին ընկերակցութեամբ, բանակավայրի կեդրոնական հրապարակին վրայ տնկեց յաւերժութեան խորհուրդը նշող արծաթափայլ եղեւնին: Ծառատնկումին յաջորդեց երգ ու պարով «համեմուած» ուրախ ժամանցի յայտագիրը:

**ՍՓԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ  
Հ.Ս.ՇԱՐԺՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ  
ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ**



Բանակումին երկրորդ օրը, Կիրակի, 5 Օգոստոսին, բանակավայր այցելեց եւ բանակողները ողջունեց Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան: Ան այս առիթով նախարարութեան ոսկէ մետալով պարգեւատրեց Համաշխարհային Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղար Լիւք Փանիստտը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը: Բանակողները, իրենց կարգին, նախարար Յակոբեանը պատուեցին սկաուտական փողկապով:

Բանակումին նախավերջին օրը, Ուրբաթ, 10 Օգոստոսին, բանակավայր այցելեց Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեան: Վարչապետը բարձր

100-ամեակի ծառատնկումը:





գնահատեց սկաուտութեան դերը սերունդներու կրթութեան եւ դաստիարակութեան ազգանուէր գործին մէջ եւ իր բարեմաղթութիւնները յղեց բանակումի մասնակիցներուն: Ապա, հայ սկաուտները շնորհաւորելով, Սարգսեան ոյժ, կորով եւ նոր հարիւրամեակներ մաղթեց անոնց:

Սկաուտներ բանակումի փողկապէն օրինակ մըն ալ յանձնեցին վարչապետ Սարգսեանին:

Բանակումի աւարտին, Շաբաթ, 11 Օգոստոսին, պատուիրակութիւնները փոխանակեցին յուշանուէրներ եւ իրարու հրաժեշտ տուին բանակումէն եւ Հայաստանէն քաղուած անմոռանալի յիշատակներով:

Բանակողներ  
Էջմիածինի մէջ:







100-ԱՄԵԱԿԻ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԱՌԸՆԹԵՐ՝

## ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀՈԳԵՒՈՐ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԻՉՆԵՐՈՒ ՀԵՏ

**Յ**այ սկաուտ ու թեան 100-ամեակի բանակումի աշխատանքներուն առընթեր, բանակումին ներկայ պաշտօնական հիւրերը առիթը ունեցան շարք մը տեսակցութիւններ ունենալու հայրենի հոգեւոր ու պետական վարիչներու հետ:

Տեսակցութիւններու շարքը սկսաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութենէն: Հնգամդամ պատուիրակութիւն մը, բաղկացած Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանէ, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեանէ, Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեանէ, Համաշխարհային Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղար Լիւք Փանիստէ եւ սկաուտական եւրոասիական բաժանմունքի տնօրէն Եուրի Էմիլիանէ, այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բացակայութեան՝ վեհարանի դահլիճին մէջ ընդունուեցաւ Նաթան Եպս. Յովհաննիսեանի կողմէ:

Տեսակցութեան ընթացքին, Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղարը դրուատիքով անդրադարձաւ հայ սկաուտութեան մասին, նշելով որ աշխարհի տարածքին հազուադէպ են 100 տարուան





պատմութիւն ունեցող սկաուտական շարժումները: Իր կարգին, Նաթան Եպս. գնահատանքով արտայայտուեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի սերնդակերտ ու մարդակերտ գործունէութեան մասին:

Յաջորդ տեսակցութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը, յետմիջօրէին, Երեւանի քաղաքապետարանին մէջ: ըՍ-

կաուտական պատուիրակութիւնը այցելեց քաղաքապետ Տարօն Մարգարեանին եւ սիրալիւր մթնոլորտի հետ արծարծեց հայ սկաուտական շարժման թափ տալու միջոցները: Քաղաքապետ Մարգարեան իր պատրաստակամութիւնը յայտնեց Երեւանի մէջ դպրոցներու բակեր տրամադրելու, իբրեւ սկաուտական հաւաքավայրեր օգտագործելու համար: Այս առիթով տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

Այնուհետեւ, պատուիրակութիւնը տեսակցութիւն մը ունեցաւ Հայաստանի փոխ վարչապետ Արմէն Գեորգեանի հետ եւ անոր հետ քննարկեց նոր սերունդի դաստիարակութեան մէջ սկաուտութեան դերակատարութեան կապուած հարցեր: Տեղի ունեցաւ տեսակէտներու փոխանակում եւ Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ապագայ ծրագիրներու ներկայացում:



# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՅԵՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱՄՇԱԿԷ ՄԻՈՒԹԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳԻՐՔԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.՝ Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Սկաուտական Կեդրոնական Յանձնախումբին կազմակերպութեամբ, Երկուշաբթի, 20 Օգոստոս 2012-ին, Հայաստանի մէջ սկիզբ առաւ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 6-րդ Համագումարը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական 16 շրջաններու, Իրանի «Արարատ», «Սիփան» եւ «Նայիրի» Միութիւններու բարձրաստիճան 28 խմբապետ-խմբապետուհիներու, Սկաուտական Կեդրոնական Յանձնախումբի 8 քոյրեր-եղբայրներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ՝ Կարպիս Գապասագալեանի եւ Բագրատ Եսայեանի:

Համագումարին մասնակցող Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու բարձրաստիճան խմբապետ-խմբապետուհիները, Կեդրոնական Վարչութեան գլխաւորութեամբ եւ Սկաուտական Կեդրոնական Յանձնախումբի անդամներուն ընկերակցութեամբ, այցելեցին Մի-ծեռնակաբերդ, ուր Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին անունով գետեղեց ծաղկեպսակ մը: Ապա, ներկայները յու-շարձանի անմար կրակին շուրջ երկիրաձուլութեամբ տեղադրեցին մեխակներ: Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբայրը խօսք առնելով ներկայները հրաւիրեց երեք վայրկեան լռութեամբ յարգելու Յեղասպանութեան զոհերու յիշատակը, միաժամանակ մտային խորհրդածութեամբ, հաւատքով ու գիտակցութեամբ զինուելու եւ ազգային ինքնուրոյն դիմազիծի պահպանման պայքարը եւ Հայ Դատի պահանջատիրութիւնը անվատ կամքով շարունակելու:

Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդ «Յառաջ նահատակ» ի խմբերգումէն ետք՝ Համագումարին մասնակիցները մեկնեցան Մաղկաձոր:

**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԲԱՑՈՒՄԸ**  
Նոյն օրը, յետմիջօրէի ժամը 4-ին,




Մաղկաձորի «Կեչառիս» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 6-րդ Համագումարին պաշտօնական բացումը, ուր Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը պաշտօնապէս բացուած յայտարարեց Համագումարին աշխատանքները: Ան ընդհանուր ակնարկ մը նետեց նախորդ հինգ Համագումարներու առաջադրանքներուն վրայ, ապա կանգ առաւ 6-րդ Համագումարի աշխատանքներուն վրայ, անդրադարձաւ մասնակցողներու երիտասարդ ու կորովի ըլլալու իրողութեան, զիրենք հրաւիրեց գիտակից յանձնառութեամբ եւ գործօն դերակատարութեամբ հետեւելու Համագումարի աշխատանքներուն, յիշեցնելով որ իւրաքանչիւրը իր շրջանին մէջ ստանձնած է բազմաճարիւր պատանիներու եւ երիտասարդներու դաստիարակութեան պատասխանատուութիւնը: Եղբ. Գապասագալեան շեշտեց, որ իւրաքանչիւրէն կ'ակնկալուի յաւերթալ յանձնառութիւն ներկայ մարտահրաւէրներուն դիմաց:

Այնուհետեւ, եղբայրը Համագումարի մասնակիցներուն ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրին սկաուտական բաժինը, որ կ'անդրա-

դառնայ միութեան սկաուտական կեանքի յառաջիկայ 10-20 տարուան զարգացման հեռանկարներուն:

Եղբոր խօսքին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջաններու ներկայացուցիչներուն զեկոյցները: Բարձրաստիճան իւրաքանչիւր խմբապետ ներկայացուց իր շրջանի սկաուտական շարքերուն պատկերը, իրականացուցած ձեռնարկները եւ մշակած ծրագիրները:





**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՕՐԵՐԸ**

Համագումարը երկրորդ եւ երրորդ օրերուն գործեց աշխատանքային վեց յանձնախումբերով:

● Գալիկ-արծուիկական կարգերու «Կակուղ թաթիկ», «Միասող», «Երկասող» գիրքերու վերամշակումը կատարող յանձնախումբ:

● Արի-արեւուշական կարգերու «Նորագիր», «Նորընծայ», «Բ. կարգ», «Ա. կարգ» գիրքերու վերամշակումը կատարող յանձնախումբ:

● Երէցական կարգի «Նախապատրաստական», «Մարզումի» եւ «Ընդհանուր ծառայութեան» շրջաններու գիտելիքներուն բերեղացումը կատարող յանձնախումբ:

● Արարատեան կարգի գործադրութեան եղանակը քննող յանձնախումբ:






● Խմբապետներու վերաորակաւորման դասընթացքի գիտելիքներուն բերեղացումը կատարող յանձնախումբ:

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ ընդհանուր բանակումին նախաժողովը պատրաստող յանձնախումբ:

Յանձնախումբերէն իւրաքանչիւրը մասնագիտական լայն ուսումնասիրութեան ենթարկելէ ետք իրեն վստահուած նիւթերը՝ ինը նիստերու ընթացքին համագումարին ներկայացուց իր բանաձեւերը, որոնք ամբողջական ու վերջնական քննարկումէ ետք ստացան բանաձեւեալ եզրակացութիւններու տեսք:

Համագումարը առանձին նիստերով քննեց նաեւ սկստական կանոնադրութեան բարեփոխման առաջարկները, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով Հ.Մ.Ը.Մ.ի սկստութեան կատարելիք աշխատանքները եւ ազգային-ընդհանրական մտահոգութիւն ներկայացնող այլ հարցեր՝ օտարամոլութեան երեւոյթ, նոր սերունդի ակնկալութիւններ, ազգային դաստիարակութեան միջոցներ, մարդու զգացմունքներու ինտելիքներ եւ այլն:

Տեղին է նշել, որ համագումարը Շրջաններու խմբապետական կազմերուն համար անխուսափելի



նկատեց այս քառամեակին եւս իրագործել, անցեալի փորձառութեամբ եւ մասնակի բարեփոխումներով, խմբապետներու վերաորակաւորման դասընթացքներ, առաջադրելով որ անոնք կատարուին ցամաքամասային դրութեամբ:

Համագումարը խոր համոզումով ընդառաջ գնաց Կեդրոնական Վարչութեան հովանաւորութիւնը վայելող Արարատեան կարգին, որուն նպատակն է խմբապետներ ղեկավարող խմբապետներ պատրաստել:

Հիմնուելով 9-րդ ընդհանուր բանակումի արձանագրած յաջողութիւններուն վրայ, համագումարը ներկայացուց նոր գաղափարներ յաջորդ բանակումի հաշուոյն, յուսալով որ կարելի կը դառնայ Բիւրականի սեփական բանակավայրին կողքին հայրենի պետութեան տրամադրած հողաշերտը օգտագործելի դարձնել:

Սկստական ընդհանուր կանոնադրութեան գլուխին տակ, համագումարը բանաձեւեց յօդուածներու բարեփոխման առաջարկներ, որոնք պիտի փոխանցուին յառաջիկայ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին՝ առ ի վաւերացում:

Մարդու զգացմունքներու հրամայականին դիմաց, համագումարը անդրադարձաւ այժմու ընկերութեան հոլովոյթին եւ տնտեսական պայմաններու ստեղծած դժուարութեանց պատճառով հաւաքական կեանքին մէջ յաւելեալ պատասխանատուութիւններ ստանձնելու կարեւորութեան:

Համագումարը շեշտեց նաեւ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով Հ.Մ.Ը.Մ.ի սկստական շարքերուն ունենալիք ներգրումին եւ ստանձնելիք պարտաւորութիւններուն: Ան արձարծեց նաեւ Հայ Դատի ի նպաստ իրագործելի գաղափարներ:

**ՇՐՋԱՊՏՈՅՏԸ ԵՒ ՓԱԿՈՒՄԸ**

Համագումարին չորրորդ օրը, Հինգշաբթի, 23 Օգոստոսին, մասնակիցները միօրեայ շրջապտոյտ մը կատարեցին ղէպի Դիլիջան եւ Սեւանայ լիճ:



**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 6-րդ համագումարին մասնակցեցան 28 խմբապետ-խմբապետուհիներ, որոնք ներկայացուցին հետեւեալ շրջանները.- Սմբատ Դրամկոչեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Նայիրի Մանուկեան, Նաթալիա Յինտոյեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Անիթա Գորգիսեան (Ալմելո), Արա Պոյաճեան (Աւստրալիա), Յարութիւն Պալեան (Գահիրէ), Վալերի Օպաթի, Սիրուն Թելեան (Գանատա), Ռուբէն Նալպանտեան (Երուսաղէմ), Ժանօ Քեչէճեան, Արտա Ձէյթունլեան (Լիբանան), Յերոս ճոճաղայեան (Լոնտոն), Աշոտ Սանամեան, Նարէ Քըլղաթեան (Հայաստան), Արմէն Մովսէսեան (Հարաւային Ամերիկա), Գոհար Ալեանաքեան (Յունաստան), Բաֆֆի Թովմասեան (Պաղտատ), Աւետիս Տէրվիշեան, Կասիա Կարապետեան (Սուրիա), Պօղոս Մահպուպեան, Կարինէ Սիսեռեան (Փարիզ), Աւագ Կարապետեան (Քուէթ), Արպի Գալստեան, Նայիրի Յարութիւնեան (Իրան - Հ.Մ.Ա.Կ.), Ալֆրէտ Քէշիշեան, Ժորժ Պօղոսեան (Իրան - «Նայիրի»), Նայիրի Կիրակոս Շիրվանեան, Նարինէ Բանթարեան (Իրան - «Սիփան»):

Սկստական Կեդրոնական Յանձնախումբը ներկայացուցին քոյրեր Ալին Պաղտասարեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Թալին Յինտոյեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Թալին Օրտոլլեան, Սեդա Պէշեան (Լիբանան), Լիլիթ Վարդանեան (Հայաստան), եղբայրներ Գառնիկ Նազարեթեան (Գանատա), Մանուկ Քեօշկերեան (Սուրիա) եւ Վաչէ Նաճարեան (Լիբանան):



Ուրբաթ, 24 Օգոստոսը եղաւ համագումարին վերջին օրը: Կազմակերպուեցաւ եզրափակիչ արարողութիւն, որուն ընթացքին Շրջաններու ներկայացուցիչները կատարեցին յուշանուէրներու փոխանակումներ՝ վառ պահելու համար համագումարին ապրուած օրերն ու անոր թելադրութիւնները: Խմբապետները իրենց Շրջաններուն անունով յանձնեցին յուշանուէրներ Կեդրոնական Վարչութեան՝ խոստանալով անվրահատ կամքով գործել ի խնդիր նոր սերունդի առողջ դաստիարակութեան: Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան Շրջաններուն եւ Սկաուտական Կեդրոնական Յանձնախումբի անդամներուն յանձնեց համագումարին յուշանուէրը, որ կը խորհրդանշէր 100-ամեակը հայ սկաուտութեան, որուն ռահվիրան Հ.Մ.Ը.Մ-ն է:



թիւնը համագումարի աշխատանքներուն: Ան բարձրօրէն գնահատեց Սկաուտական Կեդրոնական Յանձնախումբին կազմակերպական անթերի գործակցութիւնը, որուն շնորհիւ համագումարը հասաւ իր յաջող աւարտին: Ապա, խօսքը ուղղելով Յանձնախումբի անդամներուն եւ Շրջաններու խմբապետներուն, ան թելադրեց փոխադարձ գործակցութեամբ եւ յարատեւ աջակցութեամբ, ինչպէս նաեւ՝ հաւաքական ու միակամ ճիգերով յաջողցնելու համագումարի հինգ օրերու սպառնիչ ծրագիրներուն իրագործումը՝ խօսքը գործի վերածելու անշահախնդիր արժեւորումով, ի փառս Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերու վերելքին:

Փակման խօսքով, եղբ. Կարպիս Գապասագալեան գնահատեց Շրջաններու մասնակցութիւնը, ընդգծելով մասնակից խմբապետներու աշալուրջ ու հետեւողական մասնակցու-

լու համագումարի հինգ օրերու սպառնիչ ծրագիրներուն իրագործումը՝ խօսքը գործի վերածելու անշահախնդիր արժեւորումով, ի փառս Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերու վերելքին: Ցտեսութեան երգով աննկուն շղթաներ կազմած, մասնակիցները հրաժեշտ առին իրարմէ:

**Լուսանկարները՝ ՍՈՆԱ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ**

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

**Saberatours Sevan Voyages**

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY **Armavia** Արմավիա

11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabadoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com	

# ՍԿԱՈՒՏՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԱԿԵՐՏՈՒՄԻ ԾԱՌԱՅՈՂ ԴՊՐՈՑ ՄԸՆ Է

**ՓԱՐԻԶԻ «ԱՅԲ ԷՖ ԷՄ»ԻՆ Կ'ԸՍԷ  
Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆ**

Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին մասին յաճախ լսած ենք, նոյնիսկ անիմաստ է գայն ծանօթացնել այսօր, սակայն 2012-ը կը նշէ հայ սկաուտութեան 100-ամեակը: Մենք պիտի խօսինք Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան, բայց նաեւ անոր այսօրուան եւ ապագային մասին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը իր վերջին Պատգամաւորական ժողովէն ետք ունի կազմակերպական եւ աշխատանքային նորարար մօտեցումներ, որոնց մասին պիտի զրուցենք Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եւ գանձապահ եղբ. Միհրան Շիմշիրեանի հետ: Սկսինք յորեկնական այս տարիէն: Հայ սկաուտութեան 100-ամեակ: Միշտ չէ որ, ամէն պարագայի բոլոր գաղութներու մէջ չէ որ, մարդիկ կ'անդրադառնան, որ հայ ժողովուրդը սփիւռքեան այս պայմաններուն մէջ ունի սկաուտական շարժում եւ կարգ մը երկիրներու մէջ բաւական տարածւած. նոյնիսկ պիտի ըսէինք, այդ սկաուտութենէն անպայման բոլորս ինչ որ տեղ անցած ենք, բայց ոչ ամէն տեղ: Այս առումով կ'արժէ սկաուտութեան մեր պատմութիւնը յիշեցնել մեզի:

Վերջերս, Փարիզ այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան: Եղբայրը իր կեցութեան ընթացքին հանդիպումներ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի վարչութեան, սկաուտներուն եւ խմբապետական կազմին հետ, ինչպէս նաեւ ներկայ գտնուեցաւ մարզական խաղերու:

Այս առիթով, եղբ. Շիմշիրեան հարցազրոյց մը ունեցաւ Փարիզի հայկական ձայնասփիւռ՝ «Այբ էֆ էմ»էն, եւ փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի մասին տեղեկութիւններ: Զրուցավարն էր Վարդան Գաբրիէլեան:

Հարցազրոյցին շահեկանութիւնը նկատի ունենալով, ստորեւ կը փոխանցենք գայն ամբողջութեամբ:

Ղափարը ընդունած, կը փորձեն եւ կը յաջողին մէկտեղել ընդհանրապէս Պոլիս գտնուող, գաւառներէն եկած, եւ Պոլսոյ մէջ ուսանող երիտասարդները ըսկաուտութեան գաղափարին շուրջ: Ասիկա մինչեւ 1915, որոշ խմբուումներէ անցնելէ ետք, մէջտեղ կը բերէ կազմաւորուած վիճակ մը, որ հետաքրքրութիւնը կը յա-

- Նախ շնորհակալութիւն կը յայտնեմ, որ պատեհութիւնը տրուեցաւ ինձի, որպէսզի հայ սկաուտութեան հիմնադրութեան 100-ամեակին առիթով որոշ մանրամասնութիւններ եւ բացատրութիւններ տամ:

1912-ին է որ հայ սկաուտութիւնը մէջտեղ կու գայ: 1912-ին, Շաւարշ Քրիսեան, որ ընդհանրապէս երիտասարդական հարցերով գրադող մարդ մըն էր, բարեկամները՝ Գրիգոր Յակոբեան եւ Յովհաննէս Հինդլեան կը մտածեն որ հայ երիտասարդները, որոնք ընդհանրապէս Պոլիս կու գային այն ատեն գաւառներէն, հաւաքեն, միացնեն եւ որոշ դաստիարակութիւն մը տան: Այդ ատեն սկաուտութեան գաղափարը, սկաուտութեան ընթացքն ալ կարծէք բոլորին սրտին խօսող բան մըն էր, եւ այս երեք նուիրեալները, սկաուտութեան գա-

ուաջացնէ սկաուտութեան հիմնադիր Լորտ Պէյյտըն Փաուլըլին:

Պէյյտըն Փաուլըլ 1912-էն ետք հայ սկաուտութեան մասին գաղափար ունէր, բայց ինչպէս գիտէք, 1915-ի Յեղասպանութիւնը, ջարդերը պատճառ դարձան, որ այս բոլորը առկառուին որոշ ատեն մը, մինչեւ 1918:

1918-ին, հանդարտ վիճակի մէջ, երբ արդէն Շաւարշ Քրիսեան նահատակուած էր, Հինդլեան եւ Յակոբեան ուրիշ ընկերներու հետ շարունակեցին Քրիսեանի սկսած գործը եւ կամաց-կամաց սկսան խմբաւորել երիտասարդները՝ մարզանքով եւ սկաուտութեամբ:

1918-ին, Պոլսոյ մէջ կը սկսի սկաուտութիւնը վերակազմաւորուելի, բայց կամաց-կամաց ատիկա գոյն առնելով կը դառնայ «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն եւ Սկաուտներ» եւ այս ձեւով սկաուտութիւնը հայ ժողովուրդին մէջ կը սկսի աւելի տեղ գրաւել:

**Այդ օրերուն ի՞նչ պիտի բերէր սկաուտութիւնը, որուն միտքը այդքան տարածուած չէր, ինչո՞ւ ոչ՝ մարզանքը երիտասարդները համախմբելու համար:**

- Մարզանքը ընդհանրապէս խանդավառիչ բան մըն է, կու գան ֆուլթպոլ կը խաղան, պասքէթ կը խաղան, մրցումը կը յաղթեն, կը ձգեն կ'երթան, բայց սկաուտութեան մէջ որոշ դաստիարակութիւն կայ, մարդկային հասկացողութիւն մը, մարդու օգնելու գաղափարը կայ, ինքզինքը կերտելու աշխա-

տանքը կայ: Սկսած սկսած ժամանակներից մարդա- կերտումի ծառայող դպրոց մըն է: Մեր պարագային, սկսած սկսած ժամանակներից, այդ օրերուն, երբ երիտա- սարդուկները որբացած էր, որբանոց- ներու մէջ կը մնար, պարտականու- թիւներ կը զգայինք հաւաքել զիրենք, եւ դաստիարակել նախ որպէս զիտա- կից մարդ, որպէս կրթեալ մարդ, եւ ապա՝ որպէս պահանջատէր հայ, եւ ճիշդ ասոր համար է որ սկսած սկսած ժամանակներից աւելի լաւ, գործնական դաշտ մըն էր Հ.Մ.Լ.Մ-ի ճամբով հայակերտ- ման: Եւ ճիշդ ասոր համար է որ պատ- մութիւնը նաեւ կ'ըսէ, որ 1918-ին, երբ Հայաստան անկախացաւ, այդ օրերու կրթական նախարար Նիկոլ Աղբալեան հրահրեց Հ.Մ.Լ.Մ-ի ղեկավարները, որ- պէսզի Հայաստան գան եւ Հայաստանի մէջ ալ հիմնեն սկսած սկսած ժամանակներից, որպէսզի հոն գտնուող ժողովուրդը, յատկապէս որբացած երիտասարդները դաստիարակեն ու անոնցմէ տի- պար քաղաքացիներ պատրաստեն:

Մարզանքը ընդհանրապէս խանդավառիչ բան մըն է, կու գան ֆութպոլ կը խաղան, պաս- քէթ կը խաղան, մրցումը կը յաղթեն, կը ձգեն կ'երթան, բայց սկսած սկսած ժամանակներից մէջ որոշ դաստիարակութիւն կայ, մարդ- կային հասկացողութիւն մը, մարդու օգնելու գաղափարը կայ, ինքզինքը կերտելու աշ- խատանքը կայ:

Այսօր Հ.Մ.Լ.Մ-ը տասնեակ մը եր- կիրներու մէջ ունի աւելի քան 100 մասնաճիւղ, ծաղկող կազմակերպու- թիւն է, հակառակ իր տարիքին: Սկսած սկսած ժամանակներից ինչպիսի՞ն է, օրի- նակ, Մոսկուա իբրեւ նոր մասնա- ճիւղ, արդեօք հոն սկսած սկսած ժամանակներից կա՞յ:

- Մոսկուայի մէջ սկսած սկսած ժամանակներից սկսած ենք, որովհետեւ Հ.Մ. Լ.Մ-ը դարձած է դաստիարակիչ միութիւն: Մոսկուայի մէջ այլեւս մարզանքը այդքան ալ տեղ չունի, մարզանքը դարձած է վաճառակա- նական բան մը, մարդիկ մարզանք կ'ընեն, որպէսզի անոր ետեւէն դրամ շահին:

**Խօսքը մարզական ակումբներու մասին է, որ մրցաշար- քեր ունի եւ պէտք է վճարէ:**

- Այո՛, բայց ատով հանդերձ Հ.Մ.Լ.Մ-ը ունի իր մարզա- կան բաժինը, իր մարզիկները, որոնք սիրողական սահմաննե- րու մէջ կը գործեն եւ ճիշդ այդտեղէն մեկնած՝ ան իր տարե- կան մրցաշարքերը կ'ընէ, իսկ չորս տարին անգամ մըն ալ Համա-Հ.Մ.Լ.Մ-ական շափանիչով իր մարզական խաղերը կը կատարէ, բայց միշտ սիրողական, եւ հոն եւս շատ զգոյշ կ'ըլլանք, որպէսզի ատիկա ըլլայ, կարելի սահմաններուն մէջ, միայն հայկական, որովհետեւ վերջին հաշուով նպատակը հայ երիտասարդը դաստիարակելն է: Ուրեմն, այս մարզականն է, իսկ սկսած սկսած ժամանակներից ալ չորս տարին անգամ մը Համա-Հ.Մ. Լ.Մ-ական բանակումներ կը կազմակերպէ:

**2012-ին, քանի՞ Հ.Մ.Լ.Մ-ական կայ եւ անոնք ի՞նչպէս բաժնուած են՝ վարչական, սկսած սկսած, մարզիկ...**

- Առանց չափազանցելու, այսօրուան մեր թիւը 25-26 հա- գարի շուրջ կը տարուբերի: Հ.Մ.Լ.Մ-ը ունի 103 մասնաճիւ- ղեր, եւ անոնց մէջ բաժանմունքը եթէ պիտի առնենք, 60 առ հարիւրը սկսած սկսած են, իսկ 40-ը՝ մարզիկներ:

Վարչական գործեր ընողները մեծամասնութեամբ կ'ըլլան սկսած սկսած ժամանակներից շարքերէն անցնողներ, որոնք սկսած սկսած ժամանակներից չեն դադրիր: Կ'ըսեն՝ «մէկ անգամ սկսած սկսած ես, ալ մինչեւ վերջ սկսած սկսած ժամանակներից»:

Մեր վարչական բաժանմունքը ընդհանրապէս սկսած սկսած ժամանակներից ճամբէն եկող տղաք են, նաեւ մարզիկներն ալ՝ նախ ըս- կառու եղած կ'ըլլան, յետոյ մարզիկ, հոն ալ մասնաւոր հարց չկայ:

**Ինչո՞ւ այսօր 8 կամ 15 տարեկան տղայ մը պիտի միանայ Հ.Մ.Լ.Մ-ի սկսած սկսած ժամանակներից շարժումին եւ այս՝ տարբեր երկիր- ներու մէջ:**

- Շատ հետաքրքրական հարցում է, բայց հոս կու գայ ծնողքին դաստիարակութիւնը: Ծնողքը կը հաւատայ, որ երբ իր զաւակը Հ.Մ.Լ.Մ-ի սկսած սկսած ժամանակներից կը ղրկէ, անպայման որ կ'ուղղէ ապահով տեղ մը, ուր կը դաստիարակուի որպէս

**Այս արդէն 1915-1918 Պոլիս, բայց նաեւ՝ անկախ Հայաս- տանի պայմաններուն մէջ: Իսկ եթէ անդրադառնանք Սփիւռ- քի իրավիճակին, այստեղ եւս որբեր, չկազմաւորուած գա- ղուկներ, ուր դպրոց նոյնիսկ չկար, Հ.Մ.Լ.Մ-ը ի՞նչ դերակա- տարութիւն ունեցաւ, Հ.Մ.Լ.Մ-ը ընդհանրապէս, եւ սկսած սկսած ժամանակներից մասնաւորապէս:**

- Հայաստանի աշխատանքէն ետք, կամաց-կամաց քաղա- քական վիճակը սկսաւ իր անդորրութիւնը կորսնցնել եւ Պոլ- սոյ մէջ դէպքերը այնպէս մը ընթացան, որ 16 Սեպտեմբեր 1922-ին, Հ.Մ.Լ.Մ-ի վարչութիւնը ինքզինք լուծուած յայտա- րարեց եւ ըսաւ, որ ներկայ քաղաքական վիճակին մէջ չենք կրնար սկսած սկսած ժամանակներից շարունակել: Եւ հոն գտնուող ղեկա- վարները, իրենց հետ նաեւ որբանոցներու մէջ եղող երիտա- սարդներէն ոմանք, անցան Յունաստան: Ուրիշ ղեկավարներ գաղթեցին Ֆրանսա, Միջին Արեւելքի գաղութներ եւ որոշ ատեն մը ետք սկսան Սփիւռքի մէջ վերակազմել սկսած սկսած ժամանակներից կան եւ մարզական շարժումը, բայց միշտ Հ.Մ.Լ.Մ-ի ճամբով: Անշուշտ, այս աշխատանքը պէտք չէ վերագրել միայն Հ.Մ. Լ.Մ-ին, ատեն մը վերջ հայկական այլ միութիւններ եւս մէջ- տեղ եկան, բայց ընդհանրապէս ամբողջ նետած եւ ամուր գգացող միութիւնը միշտ ալ եղած է Հ.Մ.Լ.Մ-ը: Այս ձեւով, 1922-էն ետք, երբ Պոլսոյ մէջ այլեւս Հ.Մ.Լ.Մ-ը իր վարչու- թիւնը լուծեց, Սփիւռքը սկսաւ նոր աշխատանքի եւ Սուրիա, Լիբանան, Ֆրանսա սկսանք ունենալ հայ սկսած սկսած ժամանակներից:

Հ.Մ.Լ.Մ-էն բացի ուրիշներ ալ կային, բայց Հ.Մ.Լ.Մ-ը աւելի յառաջ գացած, կամ աւելի շատ անդամ ունեցող միու- թիւն էր:

**Իսկ Երեւանի՞ մէջ:**

- Երեւանի մէջ, 1920-էն ետք աշխատանքը ինքնաբերաբար դադրած էր, Խորհրդային Միութիւնը պիտի չընդունէր այդ:

գիտակից մարդ, սկսելու համար: Երբ որ գիտակից մարդ է, կը նշանակէ արդէն իր ընտանիքին հանդէպ իր պատկանելիութիւնը կ'ունենայ եւ անկէ վերջ, որպէս մարդ ինքզինքը կարգի դնել գիտէ: Անշուշտ, այս բոլորին ընթացքին կը ստանայ հայեցի դաստիարակութիւն եւ կը գիտնայ, որ ինք իբրեւ հայ պահանջատէր է, բան մը ունի եւ այդ պահանջատիրութեան մէջ ինք կը դառնայ լաւ դաստիարակուած հայ:

**Անկախ Հ.Մ.Ը.Մ.էն, մենք ունինք ընդհանրապէս լուրջ խնդիր, թէեւ աշխարհով մէկ կայ այդ խնդիրը երիտասարդութեան մօտ, սակայն խօսինք մեր մասին: Հայ երիտասարդը երբեմն չի գտներ իրեն համապատասխանող եւ գոհացնող պատճառ՝ միանալու հայկական միութեան մը: Մենք ունինք քաջողականութեան, հրապուրելու, համոզելու խնդիր: Բոլոր անոնք որոնք անցած են Հ.Մ.Ը.Մ.ի ճամբէն գիտեն ձեր ըսածները՝ կիրթ մարդ դառնալու, յարգանքը դէպի ուրիշը եւ այլն, բայց ի՞նչպէս ընել, որ երիտասարդը ոչ թէ ծնողքին դրդումով, այլ՝ ի՞նք հրապուրուի Հ.Մ.Ը.Մ.ով:**

- Մտնանշումը շատ տեղին է, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի նախավերջին Պատգամաւորական Ժողովը, 2007-ին, այս հարցով լրջօրէն գրադեցաւ, եւ եկաւ այն եզրակացութեան, որ պէտք է ռազմավարութիւն մը պատրաստէ յառաջիկայ տարիներուն համար, միշտ նկատի ունենալով ստեղծուած պայմանները

եւ ներկայի արհեստագիտութեան կարելիութիւնները, որոնք մարդիկ կը հրապուրեն: Մարդիկ իրենց սենեակի չորս պատերուն մէջ աշխարհը այլեւս իրենց սեփականութիւնը կը դարձնեն եւ ասոր ընդմէջէն՝ շատ մը հետաքրքրութիւններ, որոնք ընդհանրապէս տունէն դուրս պիտի ուզէին ընել, յարաբերութիւններով ու բարեկամութիւններով: Այսօր այդ բոլորը կեդրոնացուցած կ'ըլլան իրենց սենեակին մէջ, ինչ որ մտահոգիչ է թէ՛ ծնողներուն, թէ՛ ենթականերու ապագայի յարաբերութիւններուն մէջ: Այստեղէն մեկնած՝ Հ.Մ.Ը.Մ.ի 9-րդ Պատգամաւորական Ժողովը հինգ տարի առաջ եկաւ ըսաւ, որ պէտք է Հ.Մ.Ը.Մ.ը եւ կեդրոնական Վարչութիւնը ռազմավարութիւն մը ճշդեն՝ այս պայմանները նախատեսած, յառաջիկայ տարիներուն իրենց ծրագիրը մշակելու համար: Բարեբախտաբար, չորս տարի ետք, այսինքն՝ անցեալ ամբան, Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 10-րդ Ժողովին, ռազմավարական այդ ծրագիրը ներկայացուցաւ, եւ բաւական երկար ուսումնասիրութենէ ետք եզրակացուցաւ: Գործադրուելու ի վիճակի պիտի ըլլայ հաւանաբար յառաջիկայ տարի: Հիմա արդէն նախապատրաստական աշխատանքներու մէջ ենք: Հիմա ի՞նչ է ատիկա: Անշուշտ մայր կանոնագրութենէն, միութեան նպատակէն շեղող բան մը չէ, բայց շատ յստակօրէն գործելաձեւի հարց մըն է, որ բաւական դիւանակալական աշ-

# ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՇԻՄՇԻՐԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻԲՆԸ

Վերջերս, Փարիզ այցելեց եւ միութենական շարք մը հանդիպումներ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան:

Եղբ. Շիմշիրեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փարիզաբնակ անդամ եղբ. Յրաչ Սիսեռեանի հետ, ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի սկաուտներու կիրակնօրեայ ընդհանուր հաւաքին, Միսիթարեան վարժարանի շրջափակին մէջ:

Դրօշակի արարողութենէն եւ սկաուտական պաշտօնական հանդիսութենէն ետք, եղբայրը իր խօսքը ուղղեց ներկայ սկաուտներուն եւ թելադրեց անշեղօրէն շարունակել հայ սկաուտութեան 100-ամեայ աւանդութիւնները: Ան դրուատեց Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի գործունէութիւնը եւ թելադրեց յաւելուել թափով ու խանդավառութեամբ շարունակել սերնդակերտման նուիրական աշխատանքը:

Սկաուտական հաւաքէն ետք, եղբ. Շիմշիրեան հիւրը եղաւ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»-Հ.Մ.Ը.Մ. Քուէյթ ֆութպոլի մրցումին:



Յաջորդ օր, եղբ. Շիմշիրեան Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի նստավայրին մէջ տեսակցութիւն մը ունեցաւ մասնաճիւղի վարչութեան հետ եւ մօտէն ծանօթացաւ շրջանը յուզող հարցերուն: Հանդիպումին ընթացքին եղբ. Շիմշիրեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագրաւորումի աշխատանքներուն մասին եւ շեշտը դրաւ միութեան յատկապէս երոպայի տարածքին ունենալիք գործունէութեան մասին:

Ապա, եղբայրը առանձին հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի բարձրաստիճան խմբապետներուն հետ եւ անոնց ներկայացուց երկու դասախօսութիւն. «Ի՞նչ կը սպասուի Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետէ մը» եւ «Խմբապետի մը արժանիքները»:



խատանքներ կրնայ շրջանցել, վարչական աշխատանքներու ոճը փոփոխութեան ենթարկել, նաեւ՝ խումբերը հաւաքելու, խումբեր կազմելու, խմբապետներ կամ մարզական խումբեր ղապաւորելու աշխատանքին կը ծառայէ, այսինքն՝ այն ինչ որ ատենին նամակագրութեամբ պիտի ըլլար, այսօր անհիկա շատ արագ ձեւով՝ էլ-գիրով կ'ըլլայ, կամ այլ ձեւերով կ'ըլլայ, ատոնք բոլորը իւրացնել, որպէսզի այս միութիւնը շատ արագ ձեւով կարենայ մարդոց հետ յարաբերիլ, շատ արագ ձեւով իրարմէ լուր ունենայ, ծանօթութիւններ մէջտեղ բերել, յետոյ՝ շատ արագ ձեւով փարիզցի տղան Լիբանանի Հ.Մ.Լ.Մ.ական եղբոր հետ ընտելանայ, տեսնէ, խօսի, յարաբերի եւ գիտնայ թէ ի՞նչ պիտի ընէ միութեանական նպատակի ծիրին մէջ:

**Ընկերային ցանցեր կան արդէն, Հ.Մ.Լ.Մ.ը ի՞նչ որոշած է ընել, ստեղծել նամաստիպ ցանց Հ.Մ.Լ.Մ.ականներու համար, թէ՞ օգտուիլ այդ ցանցերէն:**

- Հ.Մ.Լ.Մ.ը այս առնչութեամբ ունի իր կայքէջը եւ անոր մէջէն կարելի է տեսնել Հ.Մ.Լ.Մ.ի 103 մասնաճիւղերուն առօրեայ գործունէութիւնը: Ան ունի նաեւ դիմատետրի իր էջը, «բարեկամ»ներու հետ յարաբերելու միջոցները, տեղեակ ըլլալու համար թէ հոս ի՞նչ գործունէութիւն կայ, անդին ի՞նչ գործունէութիւն կայ, ի՞նչպէս կրնան իրարու հետ յարաբերիլ, դեռ աւելին՝ կրնան Հայաստանի Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին ճամբով տեղեակ ըլլալ Սկաուտական Միջազգային Բիւրոյին հետ մեր գործակցութեան:

**Ե՞րբ գործադրութեան պիտի դրուի: - Դրուած է արդէն, կրնաք այցելել այդ էջերը:**

**Խօսինք Հայաստանի մասին: Ինչո՞ւ Հ.Ա.Ս.Կ. կը կոչուի Հայաստանի մէջ եւ ոչ՝ Հ.Մ.Լ.Մ.:**

- Պատմութիւն ունի, Հայաստանի մէջ Հ.Մ.Լ.Մ.ական տղաք 1989-ին կորիզ մը կազմեցին եւ կամաց-կամաց ունեցան սկաուտներ, նաեւ՝ ֆութպոլի խումբ մը: Ժամանակը եկաւ ցոյց տալու, որ Հայաստանի մէջ ֆութպոլի կամ մարզական խումբեր մենք չենք կրնար ունենալ, որովհետեւ Հայաստանի մէջ արհեստավարժութեան գաղափարը արդէն զարգացած է եւ ամէն բան քիչ մը արհեստավարժ ձեւով է, ինչ որ քիչ առաջ կ'ըլտէր, մինչ Հ.Մ.Լ.Մ.ի մէջ այդ բոլորը սիրողական է:

Ուրեմն, սկաուտութիւնը մէջտեղ եկաւ երբ Հայաստանը կամաց-կամաց անկախանալ սկսաւ: Անմիջապէս, Հ.Մ.Լ.Մ.ի Պատգամաւորական ժողովը եկաւ ըսելու, որ շատ յարմար ժամանակ է հայ սկաուտութիւնը Հայաստանի մէջ տեսնել եւ ունենալ: այդ աշխատանքը Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը սկսաւ, եւ ուրեմն միտք բանին այն էր, որ Փարիզի մէջ գործող Մեծատուրեանի Հայ Արիւնքերու խումբը, որ իր տիտղոս պատմութիւնը ունի, որուն չեմ անդադառնար, իր ներկայացուցիչներուն միջոցով այդ իրաւունքը փոխանցէ Հ.Մ.Լ.Մ.ի Հայաստանի սկաուտութեան:

**Ի՞նչ էր այդ իրաւունքը, ի՞նչը փոխանցել: - Հայ Արիւնքերու իրաւունքը, որպէս միջազգային սկաու-**

տութեան մէջ հայ սկաուտութիւնը ներկայացնող, տանիլ Հայաստան եւ յանձնել Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող սկաուտութեան, որ Հ.Մ.Լ.Մ.ն է:

Այս աշխատանքը իրագործելու համար Սկաուտական Միջազգային Բիւրոն պէտք է գիտնար, որ Հայաստանի մէջ սկաուտութիւն կայ եւ այդ սկաուտութիւնը իսկապէս գոյութիւն ունի եւ պատահական բան մը չէ: Այս մէկը կատարուեցաւ, երբ Ժագ Մորէտը 1992-ին, այդ ատենուան Սկաուտական Բիւրոյի ընդհանուր քարտուղարը, Պէյրութ եկած էր եւ Պէյրութի մէջ Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին հետ տեսակցութեան մը ընթացքին առիթը ներկայացաւ, որ իրեն ըսուի, թէ Լիբանանի մէջ գործող Հ.Մ.Լ.Մ.ը, որ հայկական սկաուտութիւն է նաեւ, կը նպաստէ եւ աշխատանք կը տանի Հայաստանի մէջ սկաուտութիւն հիմնելու: Եւ իբրեւ փաստ, զինք տարինք Պիքֆայայի ճամբան, Անթիլիասի մասնաճիւղին բանակավայրը: Մորէտը երբ անձամբ տեսաւ որ հոն իրաւ սկաուտութիւն կ'ըլլայ եւ այս մարդիկն են որ կ'ուզեն Հայաստանի մէջ սկաուտութիւն մէջտեղ բերել, ըսաւ կապի մէջ մտնենք եւ խօսինք: Այս ձեւով է որ Մորէտի հետ կապ ստեղծեցինք եւ այդ օրերուն Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գեղարզը, որ Փարիզ կը բնակէր, իրեն պարտականութիւն տրուեցաւ, որ կապը մնալուն պահէ պրն: Մորէտին հետ:

Հայաստանի մէջ, մեր վարչական եղբայրը՝ Յարութիւն Յարութիւնեանը, իր ճամբով այդ շրջանի պատասխանատուին՝ Պոնտարին հետ կապ մը ստեղծեց եւ այդ կապը շարունակուեցաւ եւ հասանք 1993:

Մինչեւ 1993 արդէն Հայաստանի մէջ գոյութիւն ունէր Հ.Մ.Լ.Մ. եւ արձանագրուած սկաուտական խումբերով կը գործէր:

Այդ միջոցին, երբ Հայաստանի սկաուտութեան կանոնադրութեան հարց ստեղծուեցաւ, Հ.Մ.Լ.Մ.ի կանոնադիրը նոյնութեամբ թարգմանուեցաւ Փրանսերէնի եւ ղրկուեցաւ պրն: Մորէտին, որ առաւ, իւրացուց եւ որոշ փոփոխութիւններ կատարելէ ետք ըսաւ, որ հոս տեղ մը պէտք է յիշուի, որ ասիկա երկրի մը սկաուտութիւնն է եւ ոչ թէ միութեան մը, որովհետեւ Միջազգային Սկաուտական Բիւրոն միութիւններ չի ճանչնար, կը ճանչնայ միայն ու միայն երկրի սկաուտութիւններ, իսկ եթէ Հայ Արիւնքեր ճանչցուած էին, որովհետեւ անոնք կը ներկայացնէին երկիր ունեցող ժողովուրդ մը, որ դուրս դրուած էր, ատոր համար էր որ իրենց իրաւունք տրուած էր:



**Հայ Արիւնքերը ուրեմն մնացած են Առաջին անկախութենէն ետք:**

- 1928-ին Հայ Արիւնքերը ընդունուած են Միջազգային Սկաուտական Բիւրոյին մէջ, բայց իբրեւ Սփիւռք: Յատուկ բան մըն էր, որպէս պետութիւն կորսնցնող երկիր: Եւ ուրեմն, երբ Հ.Մ.Լ.Մ.ի կանոնադրութիւնը ընդունուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի Շուշանածաղիկով, Հ.Մ.Լ.Մ.ի վահանով, «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով, այս պարագային, այդ իրաւունքն ալ տրուեցաւ եւ անունի փոփոխութիւն մը պիտի ըլլար, Հ.Մ.Լ.Մ.ը՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պէտք է ըլլար Հայաստանի Ազգային Միութիւն, հոն է որ եկաւ Հ.Մ.Լ.Մ.ի Պատգամաւորական ժողովը ըսելու, որ Հայաստանի սկաուտութիւնը միջազգային սկաուտական շարժումին մէջ ընդունուելու համար պէտք է որ անունը ըլլայ Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն, կը ճատուած՝ Հ.Ա.Ս.Կ.-Հ.Մ.Լ.Մ.:

**Յարը նման մանրամասն բացատրութիւն չէինք ունեցած:**  
- Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը մինչեւ օրս Միջազգային Սկաուտական Բիւրոյին մէջ Հայաստանի սկաուտութեան անունն է: Անոր նշանակը Հ.Մ.Լ.Մ.ի «Բարձրացիր-բարձրացուր» Շուշանածաղիկն է, մէջտեղը վահանին վրայ Հ.Մ.Լ.Մ. գրուած է:

**Խօսինք մեր երիտասարդները, մեր սկաուտները Հայաստանին կապելու, Հայաստանի հետ գործակցելու, Հայաստան տանիլ-բերելու Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքներուն մասին:**

- Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը մինչեւ 1993 իր Համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումները Հ.Մ.Լ.Մ. եղող երկիրներու մէջ կ'ընէր, երկու անգամ Յունաստան ըրած է, անգամ մը Փրանսա, անգամ մըն ալ Լոնտոն: Երբ որ առիթը ներկայացաւ Հայաստան մտնելու, եւ ատոր պատիւը կ'երթայ Փարիզի Հ.Մ.Լ.Մ.ին, որուն սկաուտները առաջին անգամ Մոսկուայի ճամբով Հայաստան գացին եւ իրենց հետ Հ.Մ.Լ.Մ.ի դրօշակը եւ Եռագոյնը անգամ մը Քրեմլինի պալատին առջեւ պտոյտի ատեն մէջտեղ հանեցին, յետոյ ալ Երեւան գացին: Ուրեմն, Կեդրոնական Վարչութիւնը յարմար նկատեց, որ Համա-Հ.Մ.Լ.Մ.ական իր բանակումները Հայաստանի մէջ կատարէ չորս տարին անգամ մը: Այսօր կրնանք ըսել, որ մենք Համա-Հ.Մ.Լ.Մ.ական հինգ բանակում կատարած ենք արդէն Հայաստանի մէջ: Զուտ սկաուտական:

**Քանի՞ սկաուտի մասնակցութեամբ:**  
- Սկսելու համար 250-ով սկսանք, իսկ վերջինը, երկու տարի առաջ, 555 հոգի էինք: Եթէ բանակավայրը 750 հոգիի տեղ

ուսնենար այդքան թիւ կ'ունենայինք: Տեղի չգոյութեան պատճառով սահմանափակած էինք ամէն ինչ:

Ասկէ անկախ, մեր բոլոր շրջանները, երբ առիթը ունենան, իրենց բանակումները Հայաստանի մէջ կ'ընեն: Եւ ատիկա ընդհանրապէս հեռաւոր Ամերիկայէն կ'երթան եւ իրենց բանակումները կ'ընեն, եւ այդ՝ սկզբնական շրջանին, երբ իսկապէս կարիքը կար սկստուտութիւնը ծանօթացնելու Հայաստանի մէջ: Հոն, Արեւմտեան Ամերիկայի, Լիբանանի, Աւստրալիոյ, Ֆրանսայի, սկսելու համար՝ առաջինը, մեծ ներդրում ունին Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի սկստուտութիւնը ծանօթացնելու աշխատանքին մէջ:

**Աւստրալիա եւ այլն որ կ'ըսէք պետութիւններ են:**

- Ո՛չ, մէկական խմբակներ, Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու մասին կը խօսինք:

Համա-Հ.Մ.Ը.Մ-ական մեր մարզական խաղերուն վերջինը, որ առաջինն էր Հայաստանի մէջ, 2009-ին, շատ մեծ ընդունելութիւն գտաւ ժողովուրդին քով: Երեւակայեցէք, որ բացման արարողութեան շուրջ 30,000 հոգի ներկայ էր Երեւանի «Հանրապետութեան» հրապարակը: Ինչ որ աննախընթաց երեւոյթ էր եւ թերթերը լաւագոյն ապացոյցն են այդ ուղղութեամբ, ըսելու թէ ինչ որակի խաղեր էին:

Երիտասարդութիւնը Հայաստան տանիլ-բերելու, հայրենիքին ծանօթացնելու առումով, Հ.Մ.Ը.Մ-ը մեծ աշխատանք տարած է ընդհանրապէս, գաղափարաբանութիւն մը, մտայնութիւն մը փոխանցելով եւ նաեւ դաստիարակելով իր տղաքը, որոնք Հայաստան կ'երթան եւ կը վերադառնան գիտակցելով, որ հայրենիքին հանդէպ իրենք ինչ պարտաւորութիւն ունին, ինչ զգացում պէտք է ունենան եւ ինչ ձեւով հայրենիքին օգտակար պէտք է ըլլան, եւ ասիկա Հ.Մ.Ը.Մ-ի հիմնական նպատակներէն մէկն է:

Աւարտելու համար կարեւոր խնդիր մը կայ՝ այս բոլորը ունենալով, այսօր արդեօ՞ք Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդութեան, սկստուտ կամ ոչ սկստուտ, թիւը բարձրացման մէջ է, արդեօք թիւի անկում ունի՞ք, արդեօք սփիւռքեան պայմանները մենք վերատեսութեան կ'ենթարկե՞նք, որպէսզի 1960-ի մեթոտներով չաշխատինք, խօսքը միայն համացանցային կամ արհեստագիտական նորութիւններու գործածութեան մասին չէ, այլ նաեւ՝ աշխարհայեցքի մէջ է, թէ մենք ինչպէս կը հասկնանք մեր երիտասարդները: Մեր երիտասարդները ոչ միայն համացանցի վրայ են եւ այդպէս պէտք է գտնել զիրենք, բայց նաեւ երիտասարդներուն հետ պէտք է խօսիլ, փոխանցել, մեր աշխատանքներուն մասնակից դարձնել զանոնք: Եղածը ըստ ձեզի բաւարար է, որպէսզի մենք ապահովենք Սփիւռքի մէջ յատկապէս, Հայաստանը իր կարգին, Հ.Մ.Ը.Մ-ի գոյատեւումը, բայց նաեւ՝ գոյատեւումը այդ հա-

ծնողքը կը հաւատայ, որ երբ իր գաւակը Հ.Մ.Ը.Մ-ի ըսկստուտութեան կը դրկէ, անպայման որ կ'ուղղէ ապահով տեղ մը, ուր կը դաստիարակի որպէս գիտակից մարդ, սկսելու համար: Երբ որ գիտակից մարդ է, կը նշանակէ արդէն իր ընտանիքին հանդէպ իր պատկանելիութիւնը կ'ունենայ եւ անկէ վերջ, որպէս մարդ ինքզինքը կարգի դնել գիտէ:

յապատկանելիութեան, հայապահպանման եւ պահանջատիրութեան առումով, որուն անդրադարձաք:

- Այս ուղղութեամբ պէտք է ըսել, որ բնականաբար մենք կը նկատենք, որ մեր գործելաոճին մէջ, մեր մտածելու ձեւին մէջ ասագին բան փոխւած է: Հիմա եթէ բաւական հեռու երթանք պիտի տեսնենք, թէ ինչ ձեւով կը մտածէին մեր օրերու պատասխանատուները եւ այսօր մեր երիտասարդ տղաքը ինչ ձեւով կը դիտեն նոյնանման հարցեր: Ես ձեզի պիտի տամ պզտիկ օրինակ մը, որ շատ հետաքրքրական է: Մեր վերջին Ընդհանուր Ժողովին էր, Արժանթինի ներկայացուցիչներէն մէկը ելաւ

ըսելու՝ ատենին այն հայ երիտասարդը կամ երիտասարդուհին (մի՛ խնդաք, իրականութիւն է) որ կ'ամուսնանար օտարի հետ, մենք ծուռ աչքով կը նայէինք, թէ անիկա մեր իրականութենէ դուրս ելաւ: Այսօր եկած ենք ըսելու, որ այդպէս չէ, մենք այդ օտարը ճամբելու փոխարէն, բերենք մեր ակումբը եւ փորձենք մեր իրականութիւնը, մեր հայկականութիւնը, մեր պահանջատիրութիւնը, մեր ուզածը իրեն տալ, որպէսզի ան ալ մեզի հետ զգայ: Ուրեմն, ասիկա ինքնին բան մը կը նշանակէ, մտածելու ձեւ մը կը նշանակէ, թէ մենք որքանով կրնանք օրուան հետ ընտելանալ, պայմաններու հետ դասաւորել մենք մեզ, որպէսզի մեր ընթացքը շարունակենք: Եւ ճիշդ ասոր համար է, որ Հ.Մ.Ը.Մ-ի թիւը չի պակսիր, տեսակաւորները կը շատնան, բայց մեր մտային ապրումը, զգացումը իրենց սեփականութիւնը կը փորձենք դարձնել, ինչ որ շահ է: Այս ձեւով կը դիտենք հարցը:

**Շնորհակալութիւն բացատրութիւններուն համար, մենք լսեցինք բաւական պատմութիւն, որ անձանօթ էր թէ՛ Հ.Մ.Ը.Մ-ի, թէ՛ սկստուտական շարժման առումով:**

Գիտենք, որ մեր ունկնդիրները կը ճանչնան Հ.Մ.Ը.Մ-ը, բայց ձեր ներկայացուցածը շատերուն նորութիւն էր, որովհետեւ պէտք չէ մոռնալ, որ մեր գաղութին մէջ կան մարդիկ, որոնք հին Սփիւռքը կը կազմեն, սակայն կան մարդիկ, որոնք նոր Սփիւռքը կը կազմեն: Շատ կարեւոր է կրկնել պատմութեան այս էջերը: Կարեւոր էր նաեւ, ու յատկապէս իմանալ, որ Հ.Մ.Ը.Մ-ը այսօր կը շարունակէ որպէս երիտասարդ կազմակերպութիւն գործել, ու նաեւ ինքնափնտրութիւն մէջ է այս նոր, նորարար մօտեցումները կիրարկելու կազմակերպութենէն ներս:

**Շնորհակալութիւն:**

Հարցազրոյցը գրի առաւ՝  
ՍԵԻԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶԻ ԱՂԶԻԿՆ ՈՒ ԹՈՌՆԻԿԸ ԿԸ ՎԵՐՅԻՇԵՆ  
ՀԱՅ ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱԻՈՐԻՆ ՈՂԻՍԱԿԱՆԸ

# ԳԻՒՄՐԻԻ ՏՕՆԸ

Հայ սկաուտութեան 100-ամեակի տօնակատարութիւնները պակասաւոր պիտի մնան առանց Վահան Չերազի յիշատակին ոգեկոչման:


Չերազ՝ հայ սկաուտութեան մեծ երախտաւորը իր անջնջելի կնիքը ունի Հայաստանի Ա. Հանրապետութեան սկաուտական շարժման կազմակերպման ու տարածման մէջ: 1920-ին, ան մաս կը կազմէ Երեւանի իշխանութիւններուն հրաւերով հայրենիք գործուղուած Հ.Ս.Ը.Ս.ի եռանդամ մարմնին: Որբերէն ան կը պատրաստէ սկաուտներ:

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Չերազ իր աշխատանքները կը շարունակէ իբրեւ ամերիկեան որբանոցներու ուսուցիչ: Կը կազմէ սկաուտական նորանոր խումբեր եւ կը մարզէ որբեր: Ան կը գործէ դժուարին եւ նոյնիսկ անկարելի պայմաններու մէջ, մինչեւ որ 1927-ի չարաբախտ օր մը, ան զոհ կ'երթայ համայնավար խորշակին:

Վահան Չերազի կինը ըլլալու «յանցանք»ով կը սպաննուի նաեւ Վարդուշ Չերազ: Կը փրկուի միայն Չերազ ընտանիքին դուստրը՝ Բիւրակնը, որ մինչեւ օրս կ'ապրի Երեւանի մէջ:

Այս եւ յաջորդ թիով տրուելիք յօդուածը կը կրէ Բիւրակն Չերազի զաւկին՝ Վահան Իշխանեանի ստորագրութիւնը: Յօդուածին մէջ, 85-ամեայ Բիւրակն Չերազ եւ զաւակը կը վերյիշեն իրենց հօր ու մեծ հօր ապրած ողիսական պայմանները, ձերբակալութիւնն ու գնդակահարումը Բերիայի կողմէ:

Յօդուածը գրուած է անցեալ տարի եւ հրապարակուած է «Tert.am» համացանցի կայքէջին մէջ:



## Վահան Իշխանեան ԵՐԵՒԱՆ

**Ա**յ տես, Վահան, էն սեւ շէնքը, կազաչի պոստն է, ես էղտեղ եմ ծնուել,- մեքենայի լուսամուտից մամասցոյց է տալիս ճամբի ձախ կողմում հեռուում երեւող շէնքը: Մտանք Գիւմրի:

Մի շաբաթ առաջ մամաս սսեց. «Գիւմրիի տօնին մասնակցելու հրաւէր եմ ստացել, անպայման գնալու եմ, կը գա՞ս հետս»: «Հա, կը գամ»: Հրաւիրատուսը քաղաքապետ Վարդան Ղուկասեանի ստորագրութեամբ: «Տես, գրել են Չերազ-Անդրէասեան, բայց անունս են սխալ գրել՝ Բիւրատ են գրել»: Մամայիս անունը Բիւրակն է, գրել է հայրը՝ Վահան Չերազը Բիւրակնեայ լեռներում ինչ որ ճակատամարտում յաղթանակ տանելու պատուին:

Մինչեւ 10 տարեկան մամայիս ազգանունը եղել է Չերազ, երբ մօրը գնդակահարել են ու մամաս որբ է մնացել, քեռու կինը՝ Լիզան վախից ազգանունը փոխել դարձրել Անդրէասեան: Մամաս ամբողջ կեանքն ուզել է վերականգնի Չերազը, բայց էղպէս էլ չի արել: Իսկ հիմա հրաւէրին գրուած՝ Չերազ:

«Կը սափրուես», ասի՝ «հա, կը սափրուեմ»: Նախորդ օրը էլի զգուշացրեց՝ կը սափրուես, բայց տենց էլ չսափրուեցի,

առանց սափրուելու էկայ: էս չես սափրուել,- դժգոհեց:  
Բայց պարզուեց սափրուելու հարկ չկար: Մենք Գիւմրի գնացինք մի հրաւէրով, բայց չմասնակցեցինք եւ ոչ մի միջոցառման:

16.00 Հիւրերի դիմաւորում քաղաքի մուտքի մօտ  
Իսկ մենք ժամը երկուսին արդէն Գիւմրիում էինք, ու Ռաֆիկ Պապոյեանի տանը համով-համով ուտում տիկին Սուսաննայի սարքած ճաշերը: Ինչի՞ գնդակահարեցին Չերազին,- հարցնում է Սերժը, մեզ Գիւմրի բերած վարորդը:

- Առաջին անգամ 1924 թուին են բռնում: Ուրեմն Չեկայից մարդ է գալիս որբանոց: Սկաուտը ներս չի թողնում, կարգ կար, երբ մարդ էր գալիս, սուլիչի սուլոցներով պէտք էր տեղեկացնել ղեկավարին: Մինչեւ Չերազը գալիս է, չեկիտուր ապտակում է սկաուտին, որ համարձակուել էր իրեն ներս չթողնել, Չերազն էլ չեկիտին է ապտակում: Հէնց յետեւից ընկնում են: Առաջին անգամ ձերբակալում են տանում էն-ԿԱՎԵԴԷ: Շէնքը 16-րդ փողոցի վրայ էր, ամբողջ փողոցը լցում են որբերը ու պահածոյի շիշերու կափարիչները ձեռքներին չխկչխկացնում են. չխկչխկոցի ձէնը բռնում է քաղաքը՝ Չերազին ազատում են ու որբերի ուսերի վրայ յետ տանում,- պատմում է Պապոյեանը:

էս պատմութիւնը ես չէի լսել:

Յետոյ արդէն էլի են բռնում ու աքսորում:


Երկու տարի անց վերադառնում է, 1927 թուի Յունուարին մամաս է ծնւում, ու մի քանի ամիս յետոյ Չերազին էլի ձերբակալում են որպէս դաշնակցական, տանում Թիֆլիս, ու Թիֆլիսում գնդակահարում: Բայց պապս դաշնակ չի եղել: «Վահան Չերազ եւ իր երգը Հայաստանի» գրքում գրուած է. «Եղերական կերպով ընդհատուած իր կեանքի բովանդակ ընթացքին Վահան Չերազ եղած է շեշտուած ոչ-դաշնակցական մը»:

Պապիս մասին միւս աղբիւրը Ռաֆիկ Պապոյեանի «Ճիգի-քական կուլտուրան Հայաստանում 1918-1920 թթ.» գիրքն է: Մի մէջբերում անեմ. «Լինելով Անդրանիկ զօրավարի հայկական առաջին կամաւորական գնդում, նա կուռեց 1915-1919 թթ. տարբեր ռազմաճակատներում՝ կատարելով բազմաթիւ սիրանքներ: Զէնքը մի կողմ դնելով եւ հայրենիքին ծառայելու միշտ պատրաստ Չերազը նուիրուեց հայոց բազմահազար որբերի դաստիարակութեան գործին» եւ այլն:

Սպասի սրբջ տամ, տեսնեմ Վահան Չերազ ինչ կը բերի: Այ բեզ բան, Ուրիքիպէղիայում յօդուած.

«Վահան Չերազ- Յայտնի հայ մարզիկ, Պոլսոյ եւ Հայաստանի Հանրապետութեան սկաուտական շարժման հիմնադիրներէն:

«Վահան Չերազը կրտսեր եղբայրն էր յայտնի հասարակական, քաղաքական գործիչ, մտաւորական, խմբագիր եւ գրող Մինաս Չերազի: Ան հիմնադիրներէն եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարժման: Առաջինն էր որ Ֆոլթպոլի խաղը բերաւ Օսմանեան կայսրութիւն. հիմնեց Ֆոլթպոլի խումբեր եւ կազմակերպեց խաղեր: 1920-ին, անսալով Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան նախարար Նիկոլ Աղբալեանի կոչին՝ Պոլիսէն կը փոխադրուի Ալեքսանդրապոլ, հայրենիքի մէջ մարզական կեանքին գարկ տալու համար: Այդ շրջանին, Յեղասպանութենէն վերապրած որբերու մէկ մասը Ալեքսանդրապոլ կեդրոնացած էր: Հայաստանի խորհրդայնացումէն ետք, մինչ իր ընկերներէն շատեր կը փախչէին, արհամարհելով իրեն սպառնացող վտանգը եւ ծանօթներու զգուշացումները, ան նախընտրեց մնալ հայրենիք, իր սկաուտներուն մօտ<sup>(1)</sup>: Հակառակ որ Վահան Չերազ շարքային դաշնակցական չէր, 1927-ին զինք այդպէս գրպարտելով Թիֆլիսի մէջ Բերիան անձամբ սպաննեց զինք<sup>(2)</sup>»:



26 Յուլիս 1920. Հայաստան գործուղուած Հ.Մ.Ը.Մ.ի եռանդամ պատուիրակութիւնը: Կեդրոնը՝ Վահան Չերազ:

Տեսնես ո՞վ է գրել, լաւ ա, բայց մէջը լիքը սխալներ կան: Ուղղում եմ՝ Վահան Չերազը ոչ թէ կրտսեր եղբայրն է եղել Մինաս Չերազի, այլ՝ եղբոր որդին: Նաեւ աւելացնում եմ կնոջ ու դստեր մասին տեղեկութիւն. «Չերազի կնոջը՝ Վարդանոյշ Չերազի գնդակահարում են 1937 թ.: Նրանց որբ մնացած դստերը՝ Բիւրակնին որդեգրում է Վարդանոյշի եղբայրը՝ Վարդգէս Անդրէասեանը ու վախենալով հետապնդումներից փոխում է աղջկայ ազգանունը դարձնելով Անդրէասեան:

Բիւրակն Անդրէասեանը այժմ բնակւում է Երեւանում»: Նաեւ աւելացնում գրականութիւն ենթախորագիր, տակը՝ Վագգէն Անդրէասեան «Վահան Չերազ եւ իր երգը Հայաստանի»:

- Մամ, լսե՛լ ես, որ պապայիդ Բերիան ա գնդակահարել:

- Հա, այդպէս ասում են, շատ եմ լսել: Ասում են Բերիան հարցաքննելիս անընդհատ ասել է հօրս թէ խոստովանիր որ դաշնակցական ես: Հայրս էլ, էլ չի համբերել, ասել է՝ այո, գլխիս գլխարկը, ձեռքիս փայտը, կողքիս շունը դաշնակցական են, ու տեղում Բերիան գնդակահարել է:

Բերում է եւս մի լինք akumb.am ֆորումում քննարկում «Տարօրինակ անուններ»

«Ի դէպ, հօրս անունն էլ պակաս տարօրինակ չէ: Անձնագրով Վահանչերազ է: Բայց այս անունն իր պատմութիւնն ունի: Տատիկիս հօր անունը Վահան էր, ազգանունը՝ Չերազ: Տատս չէր ուզում, որ այդ ազգանունը կորչի, որովհետեւ նա վերջին ճիւղն էր, իսկ Չերազները ազնուական տոհմ են եղել: Սովետի ժամանակ թոյլ չեն տուել ազգանուանը կպցնել եւ դարձնել Չերազ-Իշխանեան, ոչ էլ թոյլ են տուել անուանը գծիկով կպցնել (Վահան-Չերազ), դրա համար ստիպուած Վահանչերազ են դրել անունը»: Էդ Վահանչերազը ես եմ:

Պապոյեանի շնորհիւ վեց տարի առաջ Գիւմրիի մի փողոցը եւ ողիմպիական հերթափոխի դպրոցը անուանակոչուեցին Վահան Չերազ: Նաեւ մի փողոց գնդապետ Մազմանովի անունով. նա 1920 թուին Ղարսի յանձնման ժամանակ տեսնելով հայկական բանակի փախուստը ինքնասպան էր եղել: Նա 28 տարեկան էր, Գէորգեան խաչի շքանշանակիր: Մի փողոց էլ կոչուեց գեներալ Նիկոլայ Ղորղանեանի անուն, նրան էլ խմբապետ Համազասպի ու հանրապետութեան ուրիշ զինւորականների հետ կացնահարել էին պոլշեւիկները 1920 թուին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Չերազ Վարդոյշ Ալեքսանովնա, կինը գնդակահարուած յայտնի դաշնակ, սկաուտական շարժման կազմակերպիչ եւ անգլիական լրտես Վահան Չերազի: Ինքը, հին, ակտիւ դաշնակ է: Կապ է պահպանում դաշնակցական բիրոյի հետ, որտեղից ստանում է համապատասխան դիրեկտիւներ եւ իրականում հակայեղափոխական գործ է ծաւալում, ինչպէս քաղաքում այնպէս էլ նրա շրջաններում, լայն կապեր ունի դաշնակ էլեմենտների հետ, մասնաւորապէս նախկին սկաուտների, հետզհետէ նրանց քաշում է դաշնակցական գործունէութեան մէջ: Բաւականին խորամանկ, զգոյշ, փորձուած, կոնսպիրատիւ դաշնակ է: Դաշնակցական գործունէութիւնը տարել է հին ակտիւ դաշնակների միջոցով՝ մեր կողմից ջախջախուած, որոնք խմբակային մշակուած «Ակտիվիստներով» Յովհաննիսեան Աւետիս, Յեքիմեան Մկրտիչ եւ այլք: Հանդիսանալով ղեկավարը արտասահմանի հետ կապեր պահող բաւականին քողարկուած դաշնակցական կենտրոնի, գործում է շատ զգոյշ: Ունի մի շարք դաշնակ ազգականներ, ինչպէս Փարիզում, այնպէս էլ կապիտալիստական այլ երկրներում՝ Թուրքիայում, Ամերիկայում եւ այլն, որոնց հետ սիստեմատիկ նամակագրական կապ է պահպանում:

«Քննութեամբ պարզուել է, որ այս տարուան սկիզբին, Իրանից եկել է խոշոր դաշնակի կինը՝ Մամբրէ Վար-

սիկը, ով նրա տանն է մնացել եւ հակայեղափոխական գրոյցներին մասնակցել է Յովհաննիսեան Աւետիսը (մեր կողմից բռնուած), վարել են հակայեղափոխական բնոյթի գրոյցներ, հետաքրքրուել են դաշնակ էմիգրանտների ծակատագրով (բառը չի հասկացում), Իրանում գտնուող Մօրուք Վարոյշով (յայտնի դաշնակ խմբապետ, անլեզալ անցել է Իրանի սահմանը 1925 թուին) եւ ուրիշներով

«Շարադրուածը հաստատուել է Հայկազեան Ցոլակի, Յովհաննիսեան Աւետիսի (այս գործով մեղադրուող), Փիրղալամեան Հայկի, Կարապետեան Աբրահամի, Յեքիմեան Մկրտիչի եւ մեղադրեալի՝ Վարդուշ Չերազ Ալեքսանովնայի մասնակի խոստովանութեամբ, վկայութիւններով: Որոշեց. հետաքննուող գործ N1470 Չերազ Վարդուշ Ալեքսանովնայի մեղադրանքով ուղղարկել ՆԿԿԴ եռեակի քննութեանը»:

(ԽԱՉԱՏՐԵԱՆ)

(2) Վճռեց՝

Չերազ Վարդանուշ Ալեքսանովնային գնդակահարել, նրան պատկանող գոյքը գրաւել:

(Շար. 1)

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

# HOTEL

★ ★ ★

# PAVILLON MONCEAU

## PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com

Studio MCKEN 2005 PARIS

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԳԷՈՐԳ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

Րաֆֆի Սիլվահեան  
ՀԱԼԷՊ



Հայկազայությունը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքը Հինգշաբթի, 9 Օգոստոս 2012-ի առաւօտեան ստացան միութեան բազմափաստակ անդամներէն, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Գէորգ Կարապետեանի մահուան գոյժը: Եղբայրը, որպէս Հ.Մ.Ը.Մ.Ի-ական, իր վախճանամեայ ծառայութեան ընթացքին համոզուած էր, որ Հ.Մ.Ը.Մ.Ի-ը հայակերտման առաքելութեամբ գործող միութիւն է: Ան իր յուշերուն մէջ միշտ կը յիշէր պատմական այն օրը, երբ պատիւը ունեցած էր Հ.Մ.Ը.Մ.Ի «Նաւասարդեան» դաշտին վրայ մեծ եռանդով մասնակցելու ազգային հերոս Դրոյի ընդունելութեան, Հ.Մ.Ը.Մ.Ի անունով բարի գալուստի ծաղկեփունջ մը փոխանցելով անոր: Եղբ. Գէորգ հասակ առած էր այն համոզումով, որ ազգային-միութենական գործը նուիրական ու սրբազան գործ մըն է, ինչպէս որ սրբազան գործ է հայ երիտասարդին ազգային դաստիարակութեան աշխատանքը: Երիտասարդութիւն, որ պատուաբեր գործունէութեամբ ազգին ու հայրենիքին պարծանքին առարկան կը դառնայ:

Եղբ. Գէորգ Կարապետեանի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 9 Օգոստոս 2012-ին, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Արարողութեան ներկայ գտնուեցան Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Թովմասեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ Շրջանային եւ Հալէպի մասնաճիւղերու վարչութիւնները եւ Սկաուտ. Խորհուրդները, մեծ թիւով միութենական ընկերներ, Հ.Մ.Ը.Մ.Ի-ական քոյրեր եւ եղբայրներ, գաղութի կազմակերպչութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ եւ հարազատներ:

Յուղարկաւորութենէն ետք, թաղման կարգի համար ներկաները մեկնեցան Հալէպի Ազգ. գերեզմանատուն, ուր Հ.Մ.Ը.Մ.Ի շնորհախումբին առաջնորդութեամբ, եղբ. Գէորգ Կարապետեանի դրօշակածածկ դագաղը ուղղուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի դամբարան եւ յանձնուեցաւ հողին: Ապա, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահը վերադառնալով, կատար-

ւեցաւ դամբանականներու փոխանցում: Խօսքեր արտասանուեցան Հ.Ե.Մ.Ի, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններուն կողմէ: Հ.Ե.Մ.Ի դամբանական խօսքը փոխանցեց Համբիկ Ճապաղջուրեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Գապագեան, իսկ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան խօսքը՝ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Թովմասեան (խօսքը տեսնել էջ 34): Դամբանախօսները իրենց ելոյթներուն մէջ անդրադարձան հանգուցեալին անձնագոհ ծառայութիւններով լեցուն կեանքին: Ան

որ երկար տարիներ կեանքը նուիրեց միութենական աշխատանքներուն, դարձաւ օրինակելի միութենական եւ տիպար հայր: Ապա, Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի ձեռամբ տեղի ունեցաւ հանգուցեալին Հ.Մ.Ը.Մ.Ի «Արժանեաց» շքանշանի տուչութիւնը: Նախապէս ծրագրուած պարգեւատրումը տեղի պիտի ունենար ամիսներ առաջ, սակայն եղբոր անհանգստութիւնն ու երկրի պայմանները պատճառ դարձան որ արարողութիւնը յետաձգուի, եւ ցաւօք սրտի ան տեղի ունեցաւ յետ մահու: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանը ստանձնեց հանգուցեալին որդին՝ Կարօ Կարապետեանը:

### ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Եղբ. Գէորգ ծնած է Հալէպ, 1941-ին: Նախակրթութիւնը ստացած է Հալէպի Ազգային Սահակեան վարժարանէն, ապա՝ Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարանէն: Տասը տարեկանին կորսնցուցած է մայրը: Կեանքի դժուար պայմաններու բերումով, փոքր տարիքին հեռացած է դպրոցէն եւ ուղղուած է գործի՝ արհեստ ընտրելով մեքենագործութիւնը: 1946-ին ան անդամագրուած է Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մասնաճիւղի գայլիկական շարքերուն: 1954-ին, երդման արարողութիւն կատարելով՝ փոխանցուած է սկաուտական շարքեր, մաս կազմելով «Կռունկ» խումբին: Սկաուտական շարքերուն մէջ հասած է Վարիչ Առաջնորդի աստիճանին: Սկաուտական գործունէութեան առընթեր, ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.Ի մարզական կեանքին, ի մասնաւորի՝ աթլէթի եւ ֆութպոլի մարզախաղերուն: Օրին կը գործէր ֆութպոլի «Նաւասարդեան» խումբը եւ իրեն վստահուած էր խումբին խմբապետութիւնը:

Շրջան մը ետք, ան փոխանցուած է սկաուտական պատուով առաջին խումբ եւ ապա՝ ներկայացուցչական առաջին խումբ: Նոյն օրերուն ան մաս կազմած է Հայկալի Փոլիտիկոլի երիտասարդական խումբին: Զինուորական ծառայութեան օրերուն, Դամասկոսի մէջ գտնուած շրջանին, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն Փոլիտիկոլի Ա. խումբին:

1964-ին, դործի ծանր պայմաններու բերումով, ստիպուած՝ շրջանի մը համար ան դադարեցուցած է միութենական աշխատանքը, սակայն կարճ ժամանակ մը ետք նշանակուած է Սկաուտ-Խորհուրդի անդամ: Նկատի առնելով Հ.Մ.Ը.Մ-ի մարզական կեանքին աշխոյժ եւ բեղուն գործադաշտը, ան ուղղուած է մարզական ասպարէզ եւ նշանակուած է Փոլիտիկոլի յանձնախումբի ատենապետ, ապա՝ պետական վարչութեան անդամ եւ մարզական ընդհանուր պատասխանատու:

1983-ին, եղբ. Գէորգ առաջին անգամ ըլլալով ընտրուած է



Շրջանային վարչութեան անդամ: Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական վեց ժողովներու: 1979-ին Կիպրոս, 1983-ին եւ 1987-ին Յունաստան, ուր ընտրուած է Կեդրոնական վարչութեան փոխ անդամ: 1999-ին Լիբանան, 2003 եւ 2007 թուականներուն՝ Հայաստան:

2001-ին ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի միջ-դիւանական Ե. խորհրդաժողովին եւ անոր առընթեր կազմակերպուած Համա-Հ.Մ.Ը.Մ-ական 6-

րդ մարզախաղերուն:

2003-ին, ան ընտրուած է Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան անդամ: Այդ շրջանի կարեւորագոյն ծրագիրներէն մէկը եղած է Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին ուխտագնացութիւնը դէպի Տէր Զօր եւ Մարկատէ, ուր 550 նորագիր Հ.Մ.Ը.Մ-ականներ կատարած են իրենց երդումը:

1998-ին եղբ. Գէորգ Կարապետեան արժանացած է Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանին:

## ԵՂԲ. ԱՐՐԱՀԱՄ ԱԼԸՆԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ

### ՐԱՖՖԻ ՍԻՎԱԿԵԱՆ ՀԱԼԷՊ



Հ.Մ.Ը.Մ-ը տասնեակ տարիներու ընթացքին պատրաստած է այնպիսի անդամներ, որոնք իրենց ծառայութեան շրջանին իրագործած են մեծ յաջողութիւններ եւ արձանագրած են փայլուն արդիւնքներ: Նման անդամներէն մէկը կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի պատմութեան լաւագոյն Փոլիտիկոլիսներէն եղբ. Արրահամ Ալընեանը: Եղբօր համար Հ.Մ.Ը.Մ-ը ամէն ինչէ առաջ եղաւ դպրոց. Ան միշտ կ'ըսէր. «Հ.Մ.Ը.Մ-ին անդամակցողը սկաուտութեան եւ մարզախաղերու ճամբով կը ստանայ արգային ոգի: Մարզիկները պէտք է հեռու մնան շահախնդիր մօտեցումէ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ը մեզմէ այդ կը պահանջէ: Այս բոլորը կ'իրագործուին գոհողութեամբ եւ անսակարկ նուիրումով»: Եղբ. Արրահամ ապրեցաւ մարզական կեանքի այն օրերը, ուր խաղացողը չունէր անհրաժեշտ նիւթականը, որպէսզի ապահովէր իր մարզական պիտոյքները, հետեւաբար ոմանք Փոլիտիկոլը բոսիկ կը խաղային: Այդ օրերուն ան կարողացաւ դառնալ Սուրիոյ լաւագոյն Փոլիտիկոլիսներէն մէկը՝ մաս կամելով երկրի հաւաքականին:

23 Յուլիս 2012-ին, Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը սրտի խոր կսկիծով հողին յանձնեց միութեան վաստակաւոր մարզիկներէն,

ապա՝ պատասխանատու պաշտօններ ստանձնած եղբ. Արրահամ Ալընեանը:

Եղբ. Արրահամ ծնած է Անտիոք, 1930 թուականին: Նախնական ուսումը ստացած է տեղւոյն վարժարանին մէջ: 1939-ին, ընտանիքին հետ փոխադրուած է Հայկալ, ուր վեց ամիս մնալէ ետք, Ֆրանսական իշխանութեան որոշումով, Ալընեան ընտանիքը կը տեղափոխուի Տէր Զօր:

Տէր Զօրի մէջ ան յաճախած է Ս. Հովհիսիմեանց եկեղեցւոյ վարժարանը:

Նոյն շրջանին, ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերուն: Ֆրանսացիներուն Սուրիայէն հեռանալէն ետք՝ եղբայրը իր ընտանիքին հետ կը վերա-

դառնայ Հայկալ, ուր կը նետուի գործի ասպարէզ, միեւնոյն ժամանակ շարունակելով իր միութենական աշխատանքը: Երկար տարիներ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Փոլիտիկոլի խումբին, իրրեւ խաղացող, ապա՝ մարզիչ: Հ.Մ.Ը.Մ-ի մէջ ան վարած է վարչական բազմաթիւ պաշտօններ: Եղած է Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի մասնաճիւղի վարչական, ապա՝ Շրջանային վարչութեան անդամ: Ազգային կեանքի մէջ ան ստանձնած է զանազան պատասխանատուութիւններ, ինչպէս՝ Ազգ. Ուսումնասիրաց վարժարանի հոգաբարձու, Գաւառական ժողովի անդամ, Քաղաքական ժողովի անդամ, Քառէն Եփփէ Ազգ. Ծեմարանի եւ Հայ Ծերանոցի խնամակալ: Արժանացած է Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանին:



ներ կ'արձանագրէ: Ճիշդ է, ան չունի անցեալի լաւ կազմը, բայց դիւրին պատառ չէ: Զաղրէպի Տինամօն եւս բաւական փորձառութիւն ունի այս մրցաշարքին եւ դիւրութեամբ հրաժեշտ պիտի չտայ:

**Բ. խմբակին** գլխաւոր թեկնածուները Անգլիոյ Արսենալն ու Գերմանիոյ Շալքէն են: Արսենալ երիտասարդ կազմ ունի, բայց փորձառու մարզիչ Վենկըրի առաջնորդութեամբ լաւ արդիւնքներ կ'արձանագրէ: Շալքէ նոյնպէս լաւ կազմ ունի եւ անոր ակնկալութիւնները չեն սահմանափակուիր միայն առաջին հանգրուանով: Յունաստանի Օլիմփիաքօսը հակառակ իր երկրին մէջ յաջող արդիւնքներուն, Եւրոպայի

մէջ փայլուն չէ: Ֆրանսայի Մոնպրիէն համեմատաբար նորեկ մըն է եւ կրնայ բաւական սուղ վճարել իր անփորձութեան համար:

**Գ. խմբակին** «հսկան» Իտալիոյ Ա. Սէ. Միլանն է: Ան տարիներէ ի վեր շուքի մէջ է այս մրցաշարքին մէջ: Այս տարի եւս մեծ խոստումներ չունի: Անոր գլխաւոր մրցակիցը Սպանիոյ Մալախան է, որ տպաւորիչ ելոյթներ կ'ունենայ: Անտրըլէխթ Պելճիքայի ամէնէն զօրաւոր կազմը ըլլալով հանդերձ՝ Եւրոպայի մէջ անոր մրցումները լուսանցքային են: Ռուսիոյ Չենիթը բաւական լաւ կազմ ունի եւ վերջին տարիներուն իր խօսքը ունի միջազգային մրցաշարքերուն: Այս խմբակին մէջ անորոշ վիճակ կը տիրէ եւ չորս մասնակիցներն ալ կրնան անցնիլ Բ. հանգրուան:

**Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ**

**30** Օգոստոսին, Մոնաքոյի մէջ կատարուեցաւ վիճակագրութիւնը ԵՈՒ. ԷՖ. Ա.ի «Չեմփիընզ Լիկ»ի խմբակային դրութեան: 32 խումբեր բաժնուեցան ութը խմբակներու եւ իրենց առաջին մրցումները կատարեցին 18 եւ 19 Սեպտեմբերին: Պէտք է արձանագրել, որ խմբակները համեմատաբար հաւասարակչուած են: Հաւանաբար միայն չորրորդ խմբակն է, ուր մնացեալներուն համեմատած, աւելի բոլորն պայքար պիտի մղուի ՄԵՄ ակումբներու միջեւ:

**Ա. խմբակին** մէջ ո՛չ մէկ խումբ յստակ առաւելութիւն ունի: Բոլորն ալ հաւասար շափով թեկնածու են անցնելու Բ. հանգրուան: Փարիզի կազմը անուանի նորեկ մարզիկներով օժտուած՝ մեծ յոյսեր ունի: Փորթօ տոկուն կազմ է եւ այս մրցաշարքին երկու անգամ ախոյեան հանդիսացած է, այլ խօսքով՝ փորձառութիւն ունեցող կազմ մըն է: Քիեւի Տինամօն միշտ ալ անակնկալ արդիւնք-



**Դ. խմբակին** «Ալֆան ու Օմեկան» Ռէալ Մատրիտն է: Ան դժուար թէ տեղի տայ իր մրցակիցներուն դիմաց՝ հակառակ որ անոնք անուանի ակումբներ են: Գերմանիոյ Տորթմունտը պիտի փորձէ նուաճել նոր տիտղոս մը: Ան Գերմանիոյ ախոյեանութեան ցարգ արձանագրած է միջակ արդիւնքներ: Անգլիոյ Մ. Սիթին ամբողջական կազմ մը ունի եւ Ռէալէն յետոյ գլխաւոր թեկնածուն է: Ան



կրնայ անակնկալի մատնել նոյնիսկ Ռէյալը: Խմբակին չորրորդ կազմը Ամսթերտամի Այաքսն է, որ վերջին տարիներուն հետզհետէ սկսած է ինքզինք վերագտնել ու գեղեցիկ եւ տպաւորիչ ելոյթներ ունենալ: Ան դժուար թէ կարենայ անցնիլ Բ. հանգրուան, բայց կրնայ խանգարել այս կամ այն կազմին հաշիւները:



**Ե. խմբակին** մէջ բուն պայքար պիտի մղեն ախոյեան Չելսին, Իտալիոյ «նշանած» Եուվենթուսը եւ Շախթիոր Տոնեցքը: Չելսի ո՛չ միայն պիտի փորձէ պաշտպանել տիտղոսը, այլեւ՝ կրկնել անցեալ տարուան յաջողութիւնը եւ յաջորդաբար երկրորդ անգամ ըլլալով տիրանալ տիտղոսին: Եուվենթուս տարիներ շարունակ «յուռ» մնալէ ետք կը վերադառնայ բաւական պատրաստուած ու մեծ «ախորժակ»ներով: Շախթիոր Տոնեցքը բաւական զօրաւոր կազմ ունի եւ յամառ պայքար պիտի մղէ վերոնշեալ երկուքին հետ: Դանիոյ Նորթսեալանտը գոհ պիտի դառնայ երեք զօրաւոր կազմերուն միջեւ, բայց պիտի փորձէ առաւելագոյն դրական արդիւնքները արձանագրել:

**Զ. խմբակին** մէջ Պայէրն Միւնիխ հաստատ քայլերով պիտի ուղղուի Բ. հանգրուան: Սպանիոյ վալենսիան եւս մեծ յոյսերով կը ներկայանայ այս մրցաշարքին եւ տրամադիր չէ կանուխ հրաժեշտ տալու: Պաթէի կազմը դրական սկսաւ մրցաշարքը եւ կրնայ մեծերուն «գլխացաւանք» պատճառել: Պիեյրոուսիոյ ներկայացուցիչը վերջին տարիներուն գրեթէ

ներկայ է եւ հետեւաբար ծանօթ է «խաղին» կանոններուն: Ճրանսայի Լիլը եւս պիտի ուզէ դրական արդիւնքներ եւ տպաւորիչ մրցումներ կատարել:

**Է. խմբակին** գլխաւոր թեկնածուն բնականաբար Սպանիոյ «Պարսա»ն է: Ան Կուարտիոլայի մեկնումէն ետք ոչինչ կորսնցուցած է իր մակարդակէն: Փորթուգալի Պենֆիլքան տոկուն կազմ է եւ հաւանական երկրորդ թեկնածուն է այս խմբակին: Սկովտիոյ Սելթիքը իր երկրին մէջ տիրապետող կազմ ըլլալով հանդերձ՝ Եւրոպայի մէջ միշտ ալ ձախողած է: Ան դժուար թէ կարենայ արգելակել Պարսայի, Պենֆիլքայի կամ Սպարտակ Մոսկուայի ճամբան: Սպարտակ եւս մեծ անակալութիւններով է: Ան առաջին մրցումին դժուար տեղի տուաւ Պարսայի դիմաց եւ յուշեց, թէ թեկնածու է Բ. հանգրուան անցնելու:

**Ը. խմբակին** մէջ անորոշութիւն է: Ճիշդ է, Մ. Եունայթըդ ներկայ է, սակայն անոր խաղարկութիւնը այնքան ալ տպաւորիչ չէ եւ մրցակիցներ կրնան անախորժ անակնկալներ ստեղծել անոր համար: Փորթուգալի Փրական տոկուն կազմ ունի եւ կրնայ անակնկալներ ստեղծել: Թուրքիոյ Կալաթասարայը միշտ ալ մեզի համար տհաճ անակնկալներ կը ստեղծէ: Նոյնիսկ Ռումանիոյ Քլիւժը լաւ կազմ ունի եւ ի վիճակի է Բ. հանգրուան անցնելու: Այս խմբակին մէջ իւրաքանչիւր կորսուած կէտ շատ սուղ պիտի արժէ մասնակիցներուն:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Reservations** Yerevan  
 32-38, Hanrabedoutian Street,  
 Yerevan 375010, Armenia  
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
 sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԿԵՐՊՈՎ ԿԸ ՆՇԷ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ 6-ԻՎ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ



## Քաթիա Տեր Յովակիմեան ՄՈՆԹՐԵԱԼ

Հարիւր տարիներ անցած են հայ սկաուտական շարժումի ստեղծման:

Հարիւր տարուան նուիրում՝ մեր մշակոյթին, երիտասարդութեան, ինքնակրթութեան, հայրենիքին, ազգին եւ սկաուտական շարժումի հիմնադիր Լորտ Պէյտըն Փաուըրի անանդած սկզբունքներուն:

Հարիւրամեայ տօնակատարութիւնը նշելու համար, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի, Մոնթրէալի եւ Գէմպրիի սկաուտական մասնաճիւղերը միջ-մասնաճիւղային իրենց 6-րդ բանակումը նուիրեցին այս տարեդարձին: 300-է աւելի սկաուտներ մասնակցեցան իննօրեայ բանակումին՝ Սէնթ Գաթրինգի Ուէթմաքիտին բանակավայրին մէջ, 14-22 Յուլիս: Մասնակիցներու յատկանշական այս թիւը փաստեց, որ հայ սկաուտական շարժումը ոչ միայն յաղթահարած է ժամանակի

դէմ պայքարը, այլ աւելին՝ դարձած է աւելի հզօր տարիներու ընթացքին: Գանատայի միջ-մասնաճիւղային 6-րդ բանակումին մասնակցութեան թիւը աննախընթաց էր. 6 սկաուտական խումբերով եւ 50 խմբապետներով, սկաուտները հաստատեցին ո՛չ միայն պարզ, ընկերական կապեր, այլ՝ կերտեցին ազգակցութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի էութեամբ հարըտացած՝ անոնք չհասցան ծանօթութիւններ, այլ՝ օժտուեցան ընդարձակ ընտանիքով մը, տարածուած երկու նահանգներու մէջ:

Բանակումը ինքնին յիշեցուց Հ.Մ.Ը.Մ.ի իսկութիւնը, երբ մէկտեղեց մտային եւ ֆիզիքական դաստիարակութիւնը: Բանակումը նշեց հայ սկաուտութիւնը, իբրեւ միջազգային կազմակերպութիւն, թեմա ունենալով «Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհի տարածքին»: Այսպէսով, լուսարձակի տակ առաւ սկաուտութեան դերն ու կարեւորութիւնը մեր օրերուն:

Ըստ սովորութեան, բանակումը ընդգրկեց գոյատեւման հմտութիւններ,

ընտելութեան մէջ խաղեր ու մարզանքներ, ձեռային աշխատանքներ, դաստիարակչական դասախօսութիւններ եւ, անշուշտ, խարուկահանդէսներ, բոլորը



կեդրոնացած բանակումի թեմային շուրջ: «Հայաստանի Օր»-ու անակրկալ հիւրն էր Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Խորէն Մուրատեանը, որ խարուկահանդէսը խանդավառեց իր ազգային-յեղափոխական երգերով: Յուլիս 19-ին, սկաուտական բոլոր խումբերը դաշտագնացութիւն մը ունեցան դէպի Ֆորթ Ճորձ, նշելու համար անոր երկդարեայ տարեդարձը: 1812-ին, ամերիկեան ուժերու դէմ պատերազմի ընթացքին, այս բազմաճակատ եղած է անգլիական բանակին կեդրոնատեղին: Այցելութեան ընթացքին, բանակողները ակնատես եղան հրացանաձգութեան կենդանի կատարման եւ անգլիական դրօշակի արարողութեան: Ապա, բանակողները ուղղուեցան Նիակարա Ֆոլք:

Բանակումը իր աւարտին հասաւ 21 Յուլիսին, դրօշակի պաշտօնական արարողութեամբ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի շփոթախումբին, ներկայութեամբ ծնողներու, գաղութին երեւելի անձնաւորութիւններու եւ հոգեւոր հայրերու՝ Կոմիտաս Աւագ Քհնյ. Փանոսեանի, հոգեւոր հովիւ Ս. Նշան Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու (Գէմպրի) եւ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի, հոգեւոր հովիւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու (Թորոնթո), որ այս առիթով փոխանցեց խրախուսիչ խօսք



մը, գնահատելով Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայ երիտասարդներու դաստիարակութեան մէջ:

Փակման արարողութեան ներկայ էին նաեւ Գանատայի Սկաուտներու Մեծն Թորոնթոյի Խորհուրդի Յանձնակատար Թիմ Մըքնոթըն, Մոնթրէալ Մեթրոփոլիթըն Թեմի Սկաուտներու Խմբակցութեան Յանձնակատար Ռոպըրթ Ֆիլիփսի եւ Ուելլանտ շրջանի Նոր Դեմոկրատական կուսակցութեան խորհրդարանի անդամ Մայքըմ Ալլըն, որ այս առիթով ուղղեց զօրակցական յատուկ խօսք: Ընթերցուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին ուղղուած եւ հայ սկաուտութեան իրենց զօրակցութիւնը փոխացող նամակներ՝ Ուելլանտի Նոր Դեմոկրատական կուսակցութեան նահանգային խորհրդարանի անդամ Սինտի Ֆոսթըրէն, Սէնթ Գաթրինգ շրջանի Ազատական կուսակցութեան նահանգային խորհրդարանի անդամ Սինտի Ֆոսթըրէն, Սէնթ Գաթրինգ շրջանի Ազատական կուսակցութեան նահանգային խորհրդարանի անդամ Սինտի Ֆոսթըրէն, Սէնթ Գաթրինգ շրջանի Ազատական կուսակցութեան նահանգային խորհրդարանի անդամ Սինտի Ֆոսթըրէն, Սէնթ Գաթրինգ շրջանի Ազատական կուսակցութեան նահանգային խորհրդարանի անդամ Սինտի Ֆոսթըրէն, Սէնթ Գաթրինգ շրջանի Ազատական կուսակցութեան նահանգային խորհրդարանի անդամ Սինտի Ֆոսթըրէն:

արծուիկներու երամէն քոյր Նաթալի Ջարասեան, գայլիկներու վոհմակէն եղբ. Չարլզ Փափազեան, արեւոյշներու խումբէն քոյր Նաթալի Սէրեան, արիններու խումբէն եղբ. Մհեր Գարաճեան, պարմանուհիներու փաղանգէն քոյր Կարինէ Քոլասուրտօ, երէցներու փաղանգէն եղբ. Նարեկ Պոյաճեան եւ «Հ.Մ.Ը.Մ.ը տաղանդ ունի» խաղի յաղթող եղբ. Գրիգոր Այնթապլի:

Բանակումը իրականութիւն պիտի չըլլար առանց խմբապետներու եւ կամաւորներու նուիրումին: Անոնք իրենց ժամանակը տրամադրեցին գործի, ուսումի եւ ընտանիքի հաշուոյն եւ կազմակերպեցին զայն յաջող ձեւով: Ծոխ ծրագիր մը մշակելը այնքան ալ դիւրին աշխատանք չէ: Խմբապետները վստահած Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ նուիրուած իրենց պաշտօններուն եւ խումբերուն, ստեղծեցին անմոռանալի յիշատակներ:

Իրենց տքնաջան աշխատանքին առընթեր, կարգ մը մասնակիցներ բաժնեցին իրենց տպաւորութիւնները բանակումին մասին եւ փոխանցեցին իրենց նախասիրած պահեր:

**Վազգէն Ոսկեան - Երէցներու փոխ խմբապետ (Մոնթրէալ)**

Աւարտական խարուկահանդէսը, ծնողներու մեկնումէն ետք: Վերջին «մնաք բարի»ն էր: Յոյց տուաւ շաբթը-



ւան ընթացքին մեր մշակած ընկերութիւնը: Վերջին խարուկահանդէսին ընթացքին էր որ կրցանք հաստատել, թէ բանակումը յաջողած էր:

**Սարին Սարմազեան - Պարմանուհիներու փոխ խմբապետ (Գէմպրիճ)**

Քէֆի գիշերը: Բոլորս իրարու շողկապեց շաբթուան սկիզբը: Տեսանք ինչպէս մեր կրտսեր քոյրերն ու եղբայրները հայկական շուրջպար պարեցին: Հիանալի էր եւ փաստեց, որ մեր մշակոյթը տակաւին վառ է:

**Գէորգ Պոյաճեան - Գայլիկներու խմբապետ (Մոնթրէալ)**

Այսքան հայորդիներ տեսնել նոյն բանակավայ-

րին մէջ մէկտեղուած: Հպարտ էի, երբ տեսայ որ սկաուտութիւնը տակաւին զանատահայերու առօրեային մեծ մասն է:

**Ալինա Թոբաթլեան - Արենոյններու փոխ խմբապետ (Թորոնթօ)**

Շարժապատկերի երեկոն: Հաճելի էր տեսնել բոլոր խումբերը մէկտեղուած՝ դիտելու համար շարժապատկեր մը աստղերու լոյսին ներքեւ:

**Վահէ Շահինեան - Արիններու խմբապետ (Մոնթրէալ)**

Առաջին դրօշակի արարողութիւնը: Երբ առաջին անգամ բարձրացուցինք սկաուտական դրօշը մեր դրօշակին ձողին վրայ: Սկաուտներս մեծ ջանք թափած էինք այդ ձողը կանգնեցնելու համար եւ բոլորս հպարտ էինք այդ տեսարանով:

**Թինա Տարտարեան - Արծուիկներու խմբապետի օգնական (Մոնթրէալ)**

Գայլիկ-արծուիկներու փնտրուտուքի արշաւը (Scavenger Hunt):



Առաջին անգամ ըլլալով մենք՝ խմբապետներս տեսանք այն ընկերական կապը, որ հաստատուած էր բանակումի ընթացքին: Մոնթրէալէն, Թորոնթօյէն թէ Գէմպրիճէն, կարելոր

զէ: Բոլորն ալ աշխատեցան մէկ խումբով:

**Յովսէփ Չամիչեան - Գայլիկներու խմբապետի օգնական (Թորոնթօ)**

Վարդավառի խաղը, զոր ունեցանք գայլիկներուն հետ: Ակնյայտ էր սերտ կապը գայլիկներուն եւ խմբապետներուն միջեւ:

**Լիա Տէրտէրեան - Պարմանուհի (Թորոնթօ)**

Վերջին «Մնաք Բարին» Գէմպրիճի եւ Մոնթրէալի հետ: Տրամութիւնը որ զգացինք փաստ մըն էր, որ ունեցած ենք նոր ու սերտ ընկերներ մեր կեանքը իրենցմով հարստացնելու համար:

**Արէն Տաղլեան - Երէց (Մոնթրէալ)**


Վերջին պահակութիւնս իբր արի, նախքան երէց փաղանգի փոխանցուիլս: Խմբակս, իբր մէկ ամբողջութիւն, արթուն հսկեց ամբողջ գիշերը եւ հասաւ իր նպատակին՝ պահպանելով դրօշակը: Իբր խումբի առաջնորդ, հպարտ էի ընկերներովս, որոնք հակառակ իրենց յոգնութեան, նուիրում ցուցաբերեցին այդ գիշեր:

**Րաֆֆի Գլրպոզեան - Արի (Թորոնթօ)**

Այս բանակումը յատուկ էր ինծի համար, որովհետեւ շրջանային էր եւ նոր ընկերներ ունեցայ: Սկզբը չէի ուզեր մասնակցիլ, բայց հիմա ուրախ եմ եւ հպարտ, որ եկայ այս բանակումին, որ տօնեց հայ սկաուտութեան 100-ամեակը:

**Տարօն Տէրտէրեան - Երէց (Թորոնթօ)**

Բազմաթիւ բանակումներու մասնակցած եմ իբրեւ սկաուտ, բայց այս մէկը ամենալաւն էր: Բանակումին ընթացքին ծանօթացայ նոր ընկերներու, հանդիպեցայ հին ընկերներու եւ միասնաբար հաճելի փորձառութիւն ձեռք ձգեցինք:





# ՊՐԱՒՕ ՏՂԵՐՔ

Ստորել տրուած սրտի խօսքը կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հիմնադիր դէմքերէն եղբ. Յարութիւն Յարութիւնեանին: Խօսքը տեղ գրտած է դիմատետրի անոր էջին մէջ, «Մարզիկ»-ի անցեալ թիւին «Հայաստան կը պատրաստուի 2014-ի Մոնտիալի գտումի մրցումներուն» յօդուածին առիթով:



**Ո**չ շատ հեռաւոր 1991 թ-ին, երբ որոշեցինք Փուլթպոլային թիմ ստեղծել եւ մասնակցել անկախ Հայաստանի Փուլթպոլի առաջնութեանը, չէի կարող պատկերացնել, որ առաջին չեմպիոն թիմը լինելու է իմ եւ իմ ընկերների ջանքերով ստեղծուած Հ.Մ.Ը.Մ-ը: Նաեւ այդ օրերին չէի կարող պատկերացնել, որ այդ թիմի ամենահամեստ եւ ուսեալ տղան՝ Վարդան Մինասեանը տարիներ յետոյ կը դեկավարի Հայաստանի Փուլթպոլի ազգային հաւաքակաւոր, իսկ Սարգիս Յովսէփեանը կը դառնայ այդ թիմի անփոխարինելի աւագը: Բայց դեռ այն ժամանակ ես վստահ էի, որ այս տղաները հզօր կամք ունեն եւ անմնացորդ են նուիրուած Փուլթպոլին: Ես հպարտանում եմ նրանցով եւ ոչ միայն... Այն

ժամանակուայ Հ.Մ.Ը.Մ-ը, որ ստեղծեցինք լուսահոգի Ղազարոս Տէօքմէքճեանի հետ, իր ուրոյն հետքը թողեց հայկական Փուլթպոլի ասպարէզում: Եւ որքան էլ այսօր ոմանք փորձեն տիրանալ այս տղաների դափնիներին, միեւնոյնն է, նրանք պատմութեան մէջ մտան որպէս նոր սերնդի Փուլթպոլի մշակներ:

Փառք ու պատիւ Սագոյին, Վարդանին, Արթիւրին, Արմէնին, Հայկին եւ բոլոր այն տղերքին, որ ցուրտ ու մուլթ տարիներին երկրից չհեռացան, այլ մնացին եւ իրենց անմնացորդ նուիրուածութեամբ հայկական Փուլթպոլի վերածննդի մասնակիցները դարձան: Պրա՛ւօ տղերք:

*'Made from one single slice of natural Australian opal'*



# Classique

OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia*

Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)



ԳԻՄՊՐԻՃԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻ 35-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԸՆԹԵՐ՝

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՄՈՆԹՐԷԱԼԻ, ԼԱԲԱԼԻ ԵՒ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

**Հ**ՄԸՄ-ի Գէմպրիճի մասնաճիւղի 35-ամեակի տօնակատարութիւններուն առիթով Գանատա իր կատարած այցելութեան ծիրէն ներս, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան շարք մը հանդիպումներ ունեցաւ Մոնթրէալի, Լաւալի եւ Թորոնթոյի մէջ:



ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան գանատարնակ անդամ եղբ. Արմէն Կէտիկեանի հետ, եղբ. Մկրտիչեան Մոնթրէալի մէջ ներկայ գտնուեցաւ ՀՄԸՄ-ի տեղւոյն մասնաճիւղի անդամական ընդհանուր հաւաքին, ապա ան առանձին հանդիպումներ ունեցաւ մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին հետ:

Լաւալի մէջ եւս եղբայրը ներկայ գտնուեցաւ անդամական ընդհանուր հաւաքի մը: Ան տեսակցութիւն մըն ալ ունեցաւ

Գանատայի հայոց թեմի առաջնորդ Խաթակ Արք. Յակոբեանի հետ:

Թորոնթոյի մէջ, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիբեանի հետ: Ան ներկայ գտնուեցաւ նաեւ Թորոնթոյի մասնաճիւղի անդամական հաւաքին:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱԼԱՆՍԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

**Ի**ր հիմնադրութեան 30-ամեակի տօնակատարութիւններուն (2013) պատրաստուող ՀՄԸՄ-ի Վալանսի մասնաճիւղը կը շարունակէ մարզական կեանքի իր յաջողութիւնները Ֆուտպոլի զոյգ խումբերով, որոնք երեք տարիէ ի վեր հանդէս կու գան Տրոմ Արտէշ նահանգի բարձրագոյն դասակարգին մէջ:

Վալանսի Ֆուտպոլի խումբը, որ անցնող տասնամեակին ութ դասակարգ բարձրանալով հասած է այսօրուան պատուաբեր դիրքին, կը հաշուէ 42 հայազգի Ֆուտպոլիստներ Ա. եւ Բ. խումբերով: Անցնող տարի, Ա. խումբը գրաւեց նահանգի

բարձրագոյն դասակարգին վեցերորդ դիրքը, իսկ Բ. խումբը՝ ութերորդ դիրքը: Այս տարի, խումբերը ցարդ յաղթած են Ֆրանսայի բաժակի իրենց առաջին երկու մրցումները:

Մասնաճիւղը կը գործէ եօթնանդամ վարչութեամբ մը, որուն մաս կը կազմեն եղբայրներ Պօղոս Տէրտէրեան (ատենապետ), Վահէ Կօչկարեան (փոխ ատենապետ), Փաթրիք Տէրտէրեան (գանձապահ), Կարօ Ստեփանեան, Արամ Սարգիսեան, Ժոէլ Բրտօ եւ քոյր Բրիստին Տէրտէրեան (քարտուղար):

Մասնաճիւղին Ֆուտպոլի Ա. խումբին մարզիչն է եղբ. Ժո-

էլ Քրտո, իսկ Բ. խումբը այս տարի կը մարզէ հայրենի մարզիչ Արթուր Աբրահամեան: Խումբերը իրենց փորձերը կը կատարեն «Ժիզոտէ» մարզադաշտին վրայ, շաբաթը երկու անգամ, Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը: Բոլոր մարզիկները Հ.Մ.Ը.Մ-ի շապիկը կը կրեն անվճար կերպով եւ յաճախ կը մասնակցին հեռակայ շրջաններ կատարուած մրցումներու փոխադրական ծախսերուն:

Ֆուտպոլի գոյգ խումբերը տարեկան ունին 18 հազար եւրոյի ծախս (անդամատուրքեր եւ իրաւարարներու վարձատրութիւններ): Վալանսի քաղաքատուփիւնը կը կատարէ հազիւ 6

հազար եւրոյի յատկացում, մնացեալ գումարը մասնաճիւղին վարչութիւնը կ'ապահովէ այլեւայլ միջոցներով (տարեկան օրացոյց, պարահանդէս, վիճակահանութիւն, խորովածի երեկոյ, նուիրատուութիւններ եւ այլն): Խումբին քարոզչական լայն աջակցութիւն կը ցուցաբերէ շրջանի «Ռատիօ Ա.»-ն, որ



տեւաբար համակիրները տեղեակ կը պահէ խաղերու թուականներէն եւ մանրամասնութիւններէն:

Յայտնենք, որ Վալանսի մէջ կը գործեն Հայ Մշակոյթի կեդրոնը եւ Հ.Կ.Սաչի «Աղուիթա» միօրեայ դպրոցը (Չորեքշաբթի օրերը երկու ժամ):

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ Ա. ՄԻԱԲՈՐԻ ԵՐԿՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ

### Հ.Մ.Ը.Մ.ական քոյր մը ԱՆԹԻԼԻԱՍ

Շաբաթ, 14 եւ Կիրակի, 15 Յուլիս 2012-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի Ա. միաւորի բոլոր խումբերը միասնաբար մասնակցեցան երկօրեայ բանակումի մը, որ տեղի ունեցաւ Տուարի «Շերվուտ» բանակավայրին մէջ: Իրենց խմբապետներուն առաջնորդութեամբ, կրտսեր գայլիկները, մեծ գայլիկները, արիներն ու երէցները բանակավայր ժամանեցին Շաբաթ կէսօրէ ետք, անմիջապէս լարեցին իրենց վրանները եւ պատրաստեցին դրօշակի ձողը:

Հերթաբար, տարազաւորները հետեւեցան տեսական եւ գործնական դասախօսութիւններու, որոնց նպատակն էր ամրապնդել բանակողներու սկառուտական եւ ազգային գիտելիքները, փոխանցել Կակուղ թաթիկի, Նորագիրի եւ Բ.



կարգի անդամներու յատուկ գիտելիքներ, ինչպէս նաեւ՝ շեշտը դնել խմբակային դրութեան եւ բանակումի յատուկ գիտելիքներու վրայ:

Երեկոյեան, խարոյկին շուրջ հաւաքուած, արիները վարեցին խարուկահանդէսը եւ սկառուտական կանչերով ու երգերով բոլորը խանդավառ մթնոլորտի մէջ փակեցին յայտագիրը:

Կիրակի առաւօտեան տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն, որմէ ետք գայլիկները պատրաստեցին թռչուններու յատուկ կերակուր պարունակող ձեռնային աշխատանքներ, որոնք գետեղուեցան ծառերուն վրայ: Դասախօսութիւններու աւարտին, խումբերը անցան վրանները հաւաքելու եւ ապրանքները հանրակառք բարձրացնելու աշխատանքին:

Երկօրեայ բանակումի աւարտին անդամները վերադարձան ահումբ՝ անհամբեր սպասելով մասնաճիւղին տարեկան բանակումը:

# ՀԱՒԱՏՔԻ ՈՒ ԺՐԱՋԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՐԳԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍՔԸ՝ ԵՂԲ. ԳԷՈՐԳ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)



Հալեպի ազգային ոգեշնչող միջնորդարանի մեջ ներշնչուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆուլթոնի այդ օրուան կուռքերէն ու ծանօթացաւ հայ կեանքի մեծերուն:

Երկար տարիներ ան ստանձնեց Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետութիւնը: Մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի բազմաթիւ Պատգամաւորական Ժողովներու եւ Պատգամաւորական Ցրդ ժողովի աւարտին ընտրուեցաւ Կեդրոնական Վարչութեան անդամ, քառամեայ շրջանի մը համար:

Եղբ. Գէորգ Կարապետեան եղաւ ժրջան Հ.Մ.Ը.Մ.ական: Ան գործեց զիտակցելով եւ հաւատարիմ աշխատանքին տարողութեան, զոհելով իր թանկագին ժամանակէն եւ տալով լաւագոյնը: Դժուար է ամփոփել աշխատանքը Հ.Մ.Ը.Մ.ական եղբօր մը, որուն կեանքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը նուիրական էջ մը եղած է: Եղբայր մը, որ հաւատացած է աշխատանքին եւ այդ հաւատքը փոխանցած է ոչ միայն իր զակներուն, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ ընտանիքի մեծ ու փոքր անդամներուն:

Սիրելի եղբ. Գէորգ, քու հրաժեշտովդ Հ.Մ.Ը.Մ.ը կը կորսնցնէ հաւատաւոր միութենական մը, իսկ հալեպահայտութիւնը անձնագոհ գաւակ մը: Յանուն Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին կը խոնարհինք վաստակիդ ու յիշատակիդ առջեւ: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան որոշումն էր քեզ պարգեւատրել միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով, սակայն մահն ու երկրին պայմանները չարտօնեցին որ պարգեւատրուամը կատարուի քու կենդանութեանդ ժամանակ: Այժմ, յանուն Կեդրոնական Վարչութեան տխուր սրտով քեզ կը պարգեւատրենք Հ.Մ.Ը.Մ.Ի «Արժանեաց» շքանշանով:

Սիրելի եղբ. Գէորգ, քու հրաժեշտովդ Հ.Մ.Ը.Մ.ը կը կորսնցնէ հաւատաւոր միութենական մը, իսկ հալեպահայտութիւնը անձնագոհ գաւակ մը: Յանուն Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին կը խոնարհինք վաստակիդ ու յիշատակիդ առջեւ: Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան որոշումն էր քեզ պարգեւատրել միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով, սակայն մահն ու երկրին պայմանները չարտօնեցին որ պարգեւատրուամը կատարուի քու կենդանութեանդ ժամանակ: Այժմ, յանուն Կեդրոնական Վարչութեան տխուր սրտով քեզ կը պարգեւատրենք Հ.Մ.Ը.Մ.Ի «Արժանեաց» շքանշանով:

**Դ**ժուար է գաղափարակից եղբայր մը կորսնցնելը, իսկ շատ դժուար է գայն կորսնցնելէ ետք հրաժեշտի խօսք արտասանելը:

Եղբ. Գէորգ Կարապետեանի մահուն գոյժը խոր վիշտ յառաջացուց Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ մեծ ընտանիքին ու մանաւանդ՝ Սուրիոյ շրջանին, որուն վաստակաշատ եւ երկարամեայ անդամներէն էր ինք:

Եղբ. Գէորգ Հ.Մ.Ը.Մ.Ի կազմակերպական բուրգը բարձրացաւ աստիճան ան աստիճան, եւ իւրաքանչիւր աստիճանի հետ որքան շատցան իր պատասխանատուութիւնները այնքան աւելի ան փարեցաւ իր գործին ու այնքան աւելի կապուեցաւ այն արժէքներուն, որոնք միութիւն մը միութիւն կը դարձնեն, գաղափարական իր արժէքներով տոկուն, բարոյական իր սկզբունքներով պայծառ: Հ.Մ.Ը.Մ.Ին ան մաս կազմեց Հալեպի մէջ, գայլիկական եւ սկաուտական շարքերու ճամբով: Հասակ նետեց



# ՄՆՁՆՈՒՐԱՑ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՂԲ. ԱՔՐԱՀԱՄ ԱԻԸՆԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

Սիրելի սգակիրներ, յարգելի հարազատներ,

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտ-Նորհուրդին, Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի մասնաճիւղին եւ պետական վարչութեան կողմէ կը փոխանցենք մեր սրտազգաց եւ խոր յուզմունքը միութեան վաստակաշատ երբայրներէն՝ եղբ. Աբրահամ Աւրանի տիկնոջ, զաւակներուն եւ հարազատներուն, բաժնեկիցը դառնալով անոնց տխրութեան եւ ցաւին:

Եղբ. Աբրահամ ծնած է 1930-ին, Անտիոք: Նախնական ուսումը ստացած է տեղւոյն վարժարանին մէջ: 1939-ին, ընտանիքին հետ կը փոխադրուի Տէր Զօր, ուր կ'ապրէին մօտ 400 հայ ընտանիքներ: Հոն կը յաճախէ Հռիփսիմեանց եկեղեցւոյ վարժարանը: Կ'անդամակցի Տէր Զօրի Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղին, որ կը հաշուէր մօտ 75 անդամ: Կ'ըլլայ Ֆուլթայոլիստ եւ սկաուտ:

Երկարահասակ, յաղթանդամ եւ հուժկու կառուց-



Եղբ. Աբրահամ աջ կողմէ երկրորդը, ոտքի:

Լածքով եղբ. Աբրահամ փոքր տարիքէն աչքի կը զարնէ որպէս բացառիկ յետսապահ: Ան կը պատմէ, թէ Տէր Զօրի Ֆուլթայոլի խումբը այն ատեն այնքան զօրաւոր էր, որ 1945-ի միջ-մասնաճիւղային խաղերուն, Հալէպի մէջ կը հանդիսանայ ախոյեան:

1946-ին, եղբ. Աբրահամ կը հաստատուի Հալէպ, ուր գործի ասպարէզին կողքին չի մոռնար իր պաշտելի Հ.Մ.Ը.Մ.Ի: Ան կ'ըսէր. «Ճիշդ է որ այդ օրերուն ընդհանրապէս ժողովուրդը աղքատ էր եւ շատերս Ֆուլթայոլը կը խաղայինք բոպիկ, բայց այդ մէկը մեզ աւելի կը զօրացնէր եւ մեզի կու տար յամառ կամք՝ անպայման յաջողելու: 1950-ական թուականներուն Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի Ֆուլթայոլը իր պատմութեան լաւագոյն տարիները կ'ապրէր. ունէինք 14 երկրորդական խումբեր, որոնց լաւագոյն խաղացողները կ'անցնէին ներկայացուցչական Ա- խումբը»:

Եղբ. Աբրահամ 1954-1958 թուականներ-

Վերը. Եղբ. Աբրահամ կեդրոնը, նստած: Վարը. Եղբ. Աբրահամ աջ կողմէ առաջինը, նստած:







Եղբ. Աբրահամ մրցումի մը պահուն:

րուն մաս կազմած է Սուրիոյ Փուլթպոլի ազգային խումբին եւ մասնակցած է միջազգային զանազան մրցաշարքերու, նոյնիսկ երկրէն դուրս: 1965-էն սկսեալ ան ստանձնած է խումբին մարզիչի պաշտօնը, զոր տարիներով լաւագոյնս

եւ վերելքին սիրոյն:

Յարգանք քեզի բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու կողմէ:  
Հողդ թեթեւ գայ, եղբ. Աբրահամ Աւրնեան:

վարած է: Որպէս սկաուտ, ան եղած է խումբի պատասխանատու եւ ըՄ-կաուտ. Խորհուրդի անդամ:

Եղբ. Աբրահամ տարիներով եղած է Հ.Մ.Ը.Մ-ի վարչական, ապա՝ Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ: Եղբ. Աբրահամը կը տեսնենք նաեւ ազգային զանազան պաշտօններու վրայ, ըլլալով Ազգ. Ծերանոցի եւ Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարանի ինամակալ: 1970-ին, ան կ'ընտրուի Հալէպ քաղաքի ինքնակառավարման պետական վարչութեան անդամ: Եղած է նաեւ Ազգ. Գաւառական եւ Քաղաքական Ժողովի անդամ:

Արժանացած է Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանին՝ երկար տարիներու իր անսակարկ եւ անձնուրաց ծառայութեան համար, իրեն շատ սիրելի Հ.Մ.Ը.Մ-ի հզօրացման

with the complements of

**Restaurant Al-Mayass**

# ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԳԱԼԱՅՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւն  
ՊԵՅՐՈՒԹ**

**Դ**աժան են մահն ու ճակատագիրը, սակայն անոնց հետ հաշտուիլը միակ ընտրանքն է:

Յունիսին, մեզմէ յաւէտ բաժնուեցաւ ազնիւ հայրորդի մը, բարի եղբայր մը եւ ընտանիքի հայր մը, որ սիրուած էր ամբողջ շրջապատին կողմէ՝ յարգանք պարտադրելով իր անձին հանդէպ:

Եղբ. Յակոբ Գալայճեանի անակնկալ մահուան գոյժը տխրեցուց բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները, ինչպէս նաեւ՝ իր բոլոր ծանօթները:

Զինք ճանչցողները կրնան վկայել եղբ. Յակոբի ազգասիրութեան, ծառայասիրութեան ոգիին ու անոր մարդկային արժանիքներուն մասին:

Եղբ. Յակոբ ծնած էր Տիգրանակերտ, 1926-ին: Փոքր տարիքէն գաղթականութեան զրկանքները ապրելէ ետք, ծնողքին հետ փոխադրուած էր Պէյրութի արեւելեան արուարձաններէն Հատէթի շրջանը: Եղած էր Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի հիմնադիր անդամներէն եւ 1949-1960 ծառայած էր Հ.Մ.Ը.Մ.ի Հատէթի մասնաճիւղին: Ապա, մասնաճիւղին լուծումէն ետք, ան անդամակցած էր Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին, 52 տարի դառնալով անոր հաւատաւոր անդամներէն մէկը [Յատէթի Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութեան մասին տեսնել «Մարզիկ»ի Է. տարուան (1988) թիւ 82-ին մէջ լոյս տեսած իր յօդուածը- «Մ.»]:

Երկար տարիներ, եղբ. Յակոբ կ'անտեսէր անձրեւն ու արեւը եւ ամէն կիրակի ներկայ կ'ըլլար Անթիլիասի մայրավանքի կամ Ս. Նշան մայր եկեղեցու Ս. Պատարագին:

Անկարելի էր, որ եղբայր Յակոբ բացակայէր ազգային ձեռնարկներէ, տօնական հանդիսութիւններէ, յուշահանդէսներէ, մշակութային թէ մարզական հաւաքներէ:

Եղբայր Յակոբ հպարտութեամբ կ'արտայայտուէր, որ ինք «Մարզիկ» պաշտօնաթերթին բաժանորդագրուած է առաջին օրէն եւ ունի թերթին ամբողջական հաւաքածոն: Մոլի ընթերցասէր մը ըլլալու կողքին, ան ժրջան գրող մըն էր: Տեւաբար իր մտածումները թուղթին կը յանձնէր եւ գանոնք «Մարզիկ»ի խմբագրութեան կը ներկայացնէր, հրատարակելու կամ իբրեւ արխիւ գանոնք պահելու խնդրանքով: Իր ստորագրութեամբ թերթին մէջ լոյս տեսած են երեք «Նամականի»ներ: 1999-ին, ան կը գրէր. «63 տարուան Հ.Մ.Ը.Մ.ական կեանքիս մէջ, երազ մը շարունակ չարջրկած է միտքս. ինչո՞ւ կեղրոնական մարգաւան մը չունենալ Հայաս-



տանի մէջ» («Մարզիկ», թիւ 206): Այլ առիթով մը, 2000 թուականին, ան կոչ կ'ուղղէր իր սերնդակիցներուն աշխատակցելու «Մարզիկ»ին. «Ես կը փափաքիմ, որ մեր սերունդի Հ.Մ.Ը.Մ.ականները, 40 կամ 50 տարուան միութենական եղբայրները գրեն իրենց յուշերը եւ դրկեն գանոնք թերթին: Այսօրուան սերունդը պէտք ունի անցեալի յաջողութիւններով ներշնչուելու: Ունինք վաստակաւոր բազմաթիւ եղբայրներ, որոնք վստահաբար ահագին յուշեր կամ դրուագներ ունին Հ.Մ.Ը.Մ.ականի իրենց կեանքէն, վաղը եթէ մահանան՝ իրենց հետ կը թաղուին նաեւ այդ յուշերը: «Մարզիկ»ը յարմար տեղն է այդ յուշերուն հրատարակութեան» («Մարզիկ», թիւ 213):

2012-ի Մայիսեան փառատօնէն իր բացակայութիւնը աչքի գարկաւ, որովհետեւ բնական չէր, որ ան նման ձեռնարկէ մը բացակայէր:

Եղբ. Յակոբ, իբրեւ շառաւիղը Յեղասպանութենէն ճողպրած սերունդին, ինքնաշխատութեամբ յաջողած էր դէմ դնել կեանքի դժուար պայմաններուն. կազմած էր աւանդութիւններու հաւատարիմ հայ ընտանիք ու հայօրէն դաստիարակած էր իր զաւակները:


Ան գործեց անսահման նուիրումով եւ անձնագոհութեամբ՝ ազգային, կուսակցական, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Տիգրանակերտի հայրենակցական միութեան կառույցներուն մէջ: Ան եղաւ նուիրեալ կուսակցական: 1950-էն մինչեւ 2012, 62 տարի անշահախնդրօրէն ծառայեց Հ.Յ.Դաշնակցութեան դրօշին, մաս կազմելով Պէյրութի «Քրիստափոր» կոմիտէութեան: Ծարունակ ան մտահոգուեցաւ հայութեամբ, հայրենիքով եւ ազգային ցաւերով: Ապրեցաւ հայրենիքի կարօտով, ուրախացաւ Հայաստանի անկախացումով եւ աչքերը փակեց գոհունակ՝ տեսնելէ ետք նորանկախ հայրենիքի անկախացման 20-ամեակի տօնակատարութիւնները:

Սիրելի՛ եղբայր Յակոբ, միշտ պիտի յիշենք քեզ: Քանի մը տողերով այս գրութիւնը պիտի սփոփէ մեր ցաւն ու վիշտը քու անակնկալ մեկնումիդ ի լուր:

Թող երթդ բարի ըլլայ, հակառակ անոր որ անդարմանելի է կորուստդ եւ անմոռանալի յիշատակներ ձգած ես մեր հոգիներուն մէջ:

Երթդ բարի, որովհետեւ տարիներու անմնացորդ ու անշահախնդիր վաստակդ օրինակ պիտի դառնայ եւ ոգեշնչէ մեզ:

Խուսկ ու մոմ քու անթառամ յիշատակիդ:



# ԱՂԹԱՄԱՐ ԿՂՁԻՆ


**Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան  
ՊԷՅՐՈՒԹ**



**Ա**ղթամար կղզին յատուկ տեղ ունի հայ ժողովուրդի պատմութեան մէջ: Բագրատունի Գագիկ Արծրունի թագաւորին օրով (10-րդ դար) ան հասած է իր ծաղկման գագաթնակէտին: Անոր օրով կառուցուած է Ս. Խաչ տաճարը եւ պալատը, որոնցմէ ցաւօք այսօր կանգուն է միայն Ս. Խաչը տաճարը: Արծրունիները Աղթամար կղզիին վրայ կառուցեցին իրենց մայրաքաղաքը: Ս. Խաչ տաճարը կառուցած է Մանուէլ ճարտարապետը, 915-921 թուականներուն: Ան հայկական ճարտարապետութեան գլուխ գործոցներէն մէկն է: Ինչպէս պատմիչ Թովմա Արծրունին կը վկայէ, Գագիկ Արծրունի հրամայած է, որ ան ունենայ քառասուն կանգուն երկարութիւն, նոյնքան ալ լայնք եւ բարձրութիւն: Տաճարը ահեղ եւ զարմանալի տեսք ունի: Եկեղեցիի պատերուն վրայ մինչեւ այսօր կը մնան բազմաթիւ քանդակներ՝ ծաղիկներ, ծառեր, դէմքեր, արձանախումբեր, արձանագրութիւններ եւ խորաքանդակներ:




Կանգուն- երկարութեան հին չափ մըն է, որ հաւասար է մօտաւորապէս կէս մետրի:



# ՎԱՆԱՅ ԼԻՃ



**Վ**անայ լիճը հին ժամանակ կոչուած է Տոսպա, Ռչտունեաց, Բզնունեանց ծով: Մակերեսը 3760 քառակուսի քմ. է, երկարութիւնը՝ մօտ 125 քմ.: Ունի անկանոն քառանկիւնի տեսք: Անցեալի ջրային մեծ աւազանի մը մնացորդն է ան: Չուրը աղի է, ունի մաքրիչ յատկութիւն, թափանցիկ է, գոյնը՝ կապոյտ, առաւօտեան եւ երեկոյեան ժամերուն տարբեր երանգներ ունի: Չուկերէն կայ միայն տառեխը: Թռչուններու աշխարհէն բնորոշ են որորներն ու ջրագուաները, որոնք այստեղ կու գան մօտակայ Նագիկ լիճէն: Լճափնեայ բնակիչները կը զբաղին ձկնորսութեամբ եւ աղի արդիւնագործութեամբ: Ափերուն կը գտնուին Վան, Ակունց, Բերկրի, Արծկէ, Խլաթ, Դատուան, Ոստան եւ այլ բնակավայրերը: Շրջակայքին կան հայկական մշակոյթի բազմաթիւ յուշարձաններ: Վանայ լիճը ունի չորս կղզիներ՝ Աղթամար, Լիմ, Կտուց եւ Առտէր: Անոնցմէ ամէնէն մեծն ու նշանաւորը Աղթամար կղզին է:



## ՀԱՆՆԵԼՈՒԿ

(Ներսէս Շնորհալիի հանելուկներէն)

Ո՞վ է, ի՞նչ է:

Ամբողջ օրը տունը կը նստի,  
Բարձին վրայ կը քնանայ,  
Երբ մուկը տեսնէ՝ յանկարծ  
Բազէի պէս որսի կ'անցնի:  
(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ թիւի հանելուկին պատասխանն էր ծիածան):


# ՎԱՆԱՅ ԿԱՏՈՒՆ

**Վ**անայ լիճին շրջակայքը տարածուած են կատուներու հագուազիւտ եւ եզակի ցեղերէն Վանայ կատուները: Անոնք ճերմակ, մետաքսանման, փափկամազ կենդանիներ են: Ունին ջղուտ մարմին, զարգացած ուղեղ եւ վագրի քալուածք: Անոնց պոչը աղուէսի պոչին նման է, իսկ աչքերը տարբեր գոյնի են: Խելացի են եւ ճարպիկ: Վանայ կատուները իրենց աչքերուն գոյնով կը բաժնուին երեք խումբի. ծովու ալիքին պէս վառ կապոյտ, մոխրագոյնի նրբերանգներ եւ տարբեր գոյներ (աջը կապոյտ, ձախը՝ բաց մոխրագոյն, դեղին եւ դեղնականաչ, իսկ երբեմն ալ դարչնագոյն):

Արժէքաւոր են յատկապէս տարբեր գոյնի աչքերով կատուները: Սովորաբար, այդ ցեղի կատուներու ականջներուն միջեւ կարելի է տեսնել մէկ կամ երկու կէտ: Երկու կէտի գոյութիւնը բնորոշ է տարբեր գոյնի աչքեր ունեցող կատուներուն: Այս կատուները միակն են աշխարհի վրայ, որ կը սիրեն լողալ ու խաղալ ջուրին մէջ:



## Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

## ՍՈՒՏՈՔՈՒ

4			5	7			6
5	3				4		
		8	9			7	
	4				5		7
			6	1	3		
3		2				6	
	8			4		2	
		4					8 9
7			9	2			3

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուելով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

### Նախորդին լուծումը

4	9	1	3	5	8	6	7	2
2	5	3	6	9	7	8	1	4
7	8	6	4	2	1	5	3	9
8	4	9	1	7	6	3	2	5
6	1	7	2	3	5	9	4	8
5	3	2	9	8	4	1	6	7
9	7	4	5	1	3	2	8	6
3	6	5	8	4	2	7	9	1
1	2	8	7	6	9	4	5	3

Պատասխանը՝ յաջորդիւ

### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Սպանիոյ ֆուտբոլի կազմերէն:
2. Մակոյկ - Շին Ֆէյնի գինուորական նախկին թեւը:
3. Սաւառնիլ - Չայնակից գիրեր:
4. Ժխտական մասնիկ - Յարաբերական դերանուն - Հաստ ծայրով գաւազան:
5. Գերմանահայ կուսամարտիկ:
6. Թասէ՛ - Տառի մը դրացիները - Իրաքեան լրատու գործակալութիւն:
7. Սուրբ գրային մարգարէ - Ոչխարի ճարպոտ պոչ:
8. Արմէն Գարոյի ծննդավայրը - Կատաղի:
9. Տարի - Իգական օտար անուն - Գրքոյկ:
10. Արու ուղտ - Սորվիլ - Ժամանակի միաւոր:
11. Առաջին անձը՝ անջրպետի մէջ - Ըսուած խօսք - Չայնանիչ:
12. Առարկայ - Ուրուագիծ - Հարցական դերանուն:
13. Ծաղկանց լեռնաշղթայի գագաթներէն (հակ.) - Դէզ:
14. Երթայ - Շարլոթ Գորտէյի գոհը:
15. 1958-ի լաւագոյն ֆիլմը (հակ.) - Անբացատրելի:
16. Յաւելում - Արական անուն - Ռուսերէն՝ այո՛ - Տարիք:
17. Որսական շուներու խումբ - Հնագանդի՛ր:
18. Հաստատական պատասխան - Օդ - Մարսափ:
19. Ափրիկեան երկիր - Որովայնը կուրծքէն բաժնող թաղանթը:
20. Կոկորդի գեղձ - Մարտունիի գիւղերէն - Շանաճանճ:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Հայկական հեթանոսական տոմարին Թ. ամիսը - Յարդանկողին:
2. Կենդանիներու խումբ - Չկնասէր մեծ թռչուն:
3. Քանդում - Այբուբենէն - Սիլվեսթրը Սթալոնի ֆիլմերէն:
4. Անասնամիտ - Արական օտար անուն - Չին թենսիվումըն - Ժամանում:
5. Գեղատեսիլ տերեւներով բոյս - Տառի մը անունը - Մշակուած հող - Եպիսկոպոսական գաւազան:
6. Զուարթ - Նախանձի՛ր - Արդի - Երուխանի «Աղջիկը»:
7. Գերի - Իր դասակարգին մէջ աշխարհի նոր մրցանիչ հաստատած՝ ուսանայ ծանրարարձ:
8. Փտուկիւն - Պարտքերը վճարելու անկարող անձ:
9. Ֆրանսական քաղաք - Տապալի - Չայնանիչ:
10. Յարաբերական դերանուն - Կրկնուած բաղաձայններ - Առաջուան - Ածականակերտ մասնիկ:
11. Լիբանանահայ մամուլէն - Սիլուքահայ երգիչ - Մտատանջ:
12. Ծատրակի հայրենի մեծ վարպետ - Այբուբենէն:
13. Կուրդին - Առու - Մահիճի գլխակողմ:
14. Եգիպտական օրաթերթ - Սահմանային անցք՝ Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ - Յուլիական ածական:
15. Իգական օտար անուն - Մէկ աչք ունեցող - Յերեկ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1		Մ	Ի	Լ	Ո	Ի	Ո	Ք	Ի	Պ	Ա	Ք	Ս							
2		Կ	Կ	Ո	Ի		Ք	Ե	Ր	Ա	Ն		Ի							
3		Ն	Ո	Ի	Ն	Է	Ե	Ս	Ա	Յ	Ե	Ա	Ն							
4		Ո	Ր	Ա	Կ		Լ	Ա	Ի		Լ	Խ								
5		Կ	Ո	Ռ			Տ	Ի	Պ	Ա	Ր									
6	Ս	Ա	Խ				Տ	Ց		Ց										
7	Ա	Շ	Ա	Լ			Ի		Ց	Ի	Ռ									
8	Ր		Լ	Ի			Պ	Ո	Ա		Ո									
9	Ք	Ի		Ո	Ս	Ո	Խ		Ո	Ի	Ր	Մ	Ի	Ա						
10	Ի	Ր	Ա	Ն	Ի		Ա	Հ		Ա	Ր	Ա	Ք	Կ						
11	Ս	Օ	Ս	Է	Մ	Ա	Ց	Ր	Ի	Կ		Ն	Ա	Ն	Ա					
12	Տ	Ք	Ա	Լ		Կ	Ր	Ա	Մ		Հ	Ա	Մ	Ա	Ր					
13	Է			Մ	Ա	Ն	Ի	Շ		Մ	Ա	Մ	Ո	Ի	Կ					
14	Մ	Ա	Ր	Ե	Ր	Ի		Ք	Ն	Ա	Մ	Ո	Լ		Ա					
15	Ի	Մ	Ա	Ս	Տ				Ո	Ր	Ա	Յ	Կ	Հ						
16	Ր		Մ	Ս	Ա	Կ	Ե	Ր		Օ	Ր	Ե	Ր	Ի						
17	Շ	Մ		Ի	Շ	Ա	Կ	Է	Ս		Ձ	Ա		Ձ	Ի					
18	Ե	Ա	Ն		Է	Մ	Ք		Ա	Ղ	Ա	Ն	Գ	Ե	Ր					
19	Ա	Ր	Ի	Ո	Ս		Ա	Ռ	Ն	Ա	Կ		Ա	Լ	Ի					
20	Ն	Ի	Ս	Տ		Ա	Ն	Հ	Ա	Տ		Ա	Մ	Ի	Ս					

ԹԻԻ 201 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒՑՈՒՄԸ



**Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ  
ՄԻՋ-ՄԱՄՆԱՃԻՒՂԱՅԻՆ 6-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ**